Azg
Ազգ
11 ՅՈՒՆՈՒԱՐ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 1(4620)
ISSN: 1829-1651

Զորամասի հրամանատարը ազատվել է պաշտոնից

Հարուցվել է քրեական գործ

Իջևանի զորամասում ծեծկռտուքի հետևանքով գանգուղեղային վնասվածքով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն տեղափոխված երիտասարդ Տարոն Ենգիբարյանը տասն օր անգիտակից վիճակում մնալուց հետո անցյալ գիշեր մահացել է: Մահվան պատճառների մասին վերջնական ախտորոշումը կտրվի դատաբժշկական փորձաքննությունից հետո: Հիշեցնենք, որ Տարոն Ենգիբարյանը վնասվածքն ստացել էր դեկտեմբերի 31-ին Իջևանի զորամասերից մեկում, այդ զորամասի հրամանատար Սերգեյ Կարապետյանի կողմից դաժան ծեծի ենթարկվելու հետևանքով: Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի համապատասխան հրամանագրով Իջևանի N զորամասի հրամանատար գնդապետ Սերգեյ Կարապետյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Ըստ ՊՆ քննչական ծառայության պաշտոնական հաղորդագրության, Իջևանի տարածաշրջանի զորամասերից մեկի անցագրային կետի մերձակայքում, դեկտեմբերի 31-ի ուշ երեկոյան զորամասի հրամանատար Սերգեյ Կարապետյանի եւ որոշ քաղաքացիների միջեւ տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ խուլիգանության հատկանիշներով՝ քրեական օրենսգրքի 258 հոդվածի երրորդ մասով:

Հ. Ա.

ՏԱՐԵՎՈՒՏԻ ԽՈՀԵՐ

Ինչպես դիմավորես, այնպես է՞լ...

Անցնող օրերին յուրաքանչյուրս երբեւիցէ հարյուր անգամ լսեցինք մեր շրջապատում կամ հեռուստատեսությամբ՝ Նոր տարին ինչպես դիմավորես, այդպե՞ս էլ կլինի ողջ տարին: Իսկ, իրոք, ինչպե՞ս դիմավորեցինք Նոր տարին: Անշուշտ, հարցն ուսելխմելու մասին չէ: Դա գիտենք: Բոլորս, կամ գրեթե բոլորս չափազանցեցինք, եւ հիմա հետ-հղփացման շրջանն ենք ապրում: Թերեւս ոմանք էլ դեռ սպասում են գալիք Հին-Նոր տարուն, որպեսզի... Մինչդեռ հարցս վերաբերում է տնական կոչվող այս ողջ շրջանին, որ շատերիս համար երկարեց ու տարածվեց 10-12 օրերի վրա: Պարապությո՛ւն: Ահա՛ այն բառը, որը բնորոշում է անցնող այս օրերը: Բացի աղբահանությունից, որն այս տարի կատարյալ աշխատեց, եւ տախի ծառայությունից ու մի քանի այլ ծառայություններից, պարապ էին բոլորը: Կառավարությունը, նախարարությունները, Ազգային ժողովը, լրատվամիջոցները՝ թերթերի գլխավորությամբ, բանկերը, փոստը, նույնիսկ DHL-ի նման արագընթաց փոստային ծառայությունը, դպրոցներն ու համալսարանները. ոչ թե պարապում, այլ պարապ էին:

Իսկ մեր նման երկիրը, որն ունի այսքան հոգս, մտահոգություն, դեռ կտրելիք երկար ու դժվարին ճանապարհ, որ բացի տնտեսական ճգնաժամի հետեւանքները հաղթահարելու խնդրից դեռեւս ունի իր եւ միայն իրեն հատուկ խնդիրները, իրավունք ունի՞ այսքան երկար պարապ մնալու: Այսքան երկար «վայելելու» իր տնտեսական անգործությունը:

Նրանք, ովքեր բացի հեռուստատեսային շոուներից ու սերիալներից սովորություն ունեն նաեւ թերթ կարդալու՝ գիտեն, որ անգամ բարգավաճ երկրներում մարդիկ եւ կառավարությունները տենդագին ինչպիսի՞ վազքի մեջ են հետ չմնալու, կյանքի մակարդակ բարձրացնելու, ճշտելու, ճշգրտելու եւ կատարելագործելու իրենց աշխատանքը: Անգործության եւ անգործունեության այս ինչպիսի՞ թմբիր է պատել մեզ: Ո՞ւր են շարքաշ ու հետեւողական աշխատանքի, ինքնակատարելագործման, շրջապատի նկատմամբ առավելության հասնելու, հետեւաբար այլոց կողմից փնտրված ու պահանջված լինելու ձգտումը, որը հատուկ է եղել մեր ժողովրդին դարեր շարունակ:

Քսան տարին ավելի քան բավարար է խորհրդային ծուլամտությունը հաղթահարելու համար: Ոչ ոք այլեւս մեզ չի պահելու: Ամեն ինչի պատասխանատուն մենք ենք: Թե՛ մեր լավի, թե՛ մեր վատի համար: Ու լավին, բարեկեցությանը, պանդուխտների վերադարձի ու մեր աղգայի համար ստիպված ենք աշխատել: Վերեւից ներքեւ, ներքեւից ավելի ներքեւ: Այլ ելք չունենք:

Պարապությամբ դիմավորեցինք Նոր տարին: Սկսվող տարին չպետք է լինի այդպես:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

50 ազնիվ մարդու պահանջարկ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տասնօրյա հնդկահավաբդային կենացաբանությունից ազգիս ապահով մասն արթնացավ, մի կերպ կարգի բերեց օդեմբուշ մտքերը, դուրս եկավ փողոց ու հիշեց մյուս՝ անհնդկահավ ու անբուդ մասի մասին՝ փողոցում հանդիպող ազգիս անապահով մասի սթափ, սեւեռուն հայացքը մատնում էր հայկական Նոր տարու ողջ «օջախակենացային իմաստի» մեջ չընկղմված աղքատների հսկա շերտի մասին. պետք է սթափվել, հասկացավ, պետք է գնալ՝ լուծելու անապահովների խնդիրները:

Այդ խնդիրները կային եւ անցած՝ վագրի տարում, եւ դրանից առաջ, եւ հիմա՝ այս նո՛ր տարվա մեջ են լինելու: Հարցն այն է, որ պետք է սկսել վերջապես ու մեկիկ-մեկիկ լուծել խնդիրները, այլապես ազգիս անբուդ մասը մի օր էլ չի հանդուրժի ապահովների բուդ ունենալու «իրավունքը»: Սա՝ կեսկատակ-կեսլուրջ: Իսկ իրականում, իրոք, շատ խնդիրներ մնացին չլուծված ու փոխանցվեցին նոր տարվա մեջ, անցնող ամանորյա տասնօրյակը մի փոքր հեռացրել էր մեզ դրանցից, սակայն բոլորս էլ հասկանում ենք, որ մեզ անդադար Հուռիի պես անվերջ պահել չենք կարող, գործն անընդհատ հետաձգել չի կարելի, ու թափ ենք տալիս մեզ՝ անգործունյա, անպատասխանատու եւ հուլ տասն օրից վերջապես նստ դնելով միայն աշխատանքի շնորհիվ մարդկային իրական որակների գործադրման դաշտ, միայն որտեղ մարդը կարող է տիեզերքում իր մարդկային կատարյալ տիպին արժանի կեցություն ունենալ:

Իսկ եթե խոր մտածենք՝ ծուլանալու համար ոչ մի բոպե չունենք, տիեզերակարգը կատարում է իր դարձը տիեզերաշրջանով. հնագույն օրացույցները ճշգրիտ մատնանշում են՝ 2012 թվականի դեկտեմբերի 21-ին մտնում ենք նոր տիեզերաշրջան, որտեղ մարդը ձեռք է բերելու իր գործունեության համար բոլորովին նոր հնարավորություններ եւ հմտություններ: Սա նույնքան բնական է, ինչպես նոր դար, կամ նոր հազարամյակ մուտք գործելը, հարցը, սակայն, ազգերի պատրաստ լինելու մեջ է: Ահա եւ մենք՝ հայերս շատ ժամանակ չունենք մեր կիսատ խնդիրները լուծելու, մեր մոտակա եւ հեռավոր նպատակների համար նորմալ մեկնարկ առպահովելու համար, 2012-ի վերջից առաջ պետք է փորձենք փոխել մեր կյանքը: Ու դա կարելի է անել փոքրիկ հանգրվաններով, օրինակ՝ այս տարվա մեջ խնդիր դնելով եւ այդ խնդիրները ոչ իմիտացիոն ձեւով, արմատապես եւ հիմնավորապես լուծելով: Բայց երկրային եւ տեղային բաներից խոսենք:

Տես էջ 3

Կարսի «հրեշավոր» հայ-թուրքական հուշարձանի անուժ «խաղաղությունը»

Կարսում կանգնեցված եւ ըստ հեղինակի, թուրք քանդակագործ Մեհմեդ Ասլանի՝ դեռեւս անավարտ հուշարձանը, որ պետք է խորհրդանշի մարդասիրությունն ու խաղաղությունը՝ Հայաստանի եւ Թուրքիայի բարեկամության համատեքստում, կարող է աղամոնաժվել: Այդպիսի մտադրության մասին շաբաթ՝ հունվարի 8-ին Կարսում արտահայտվել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, ինչպես նաեւ արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն: Էրդողանը 30 մետր բարձրություն ունեցող արձանը որակել է «անճոռնի եւ հրեշավոր»՝ անհարիր որակելով Կարսի ճարտարապետությանը:

Թուրքական լրատվամիջոցներում ամենաթեժ քննարկման առարկա դարձած այդ հայատարություններին ու գնահատականներին հուշարձանի հեղինակը արձագանքել է հարցադրմամբ, թե ինչպես են Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացմանը գնացող Թուրքիայի ղեկավարները պատկերացնում խաղաղությունը, երբ ուզում են ապամոնտաժել դրան նվիրված հուշարձանը:

Այդուհանդերձ, Էրդողանը Կարսի ներկայիս քաղաքաշրջանին, որ Էրդողանի ղեկավարած կուսակցությունն է ներկայացնում, կոչ է արել քանդել հուշարձանն ու փոխարենը այգի կառուցել: Ընդ որում, Էրդողանն իր գնահատականը հիմնավորել է միայն «գեղարվեստական» առումով

Արտերկրի որոշ լրատվամիջոցներ եւս անդրադարձել են այս խնդրին իրենց մեկնաբանություններով, որոնցից հուշարձանի աղամոնաժման դրդապատճառների մասին հայ-թուրքական հաշտեցման համատեքստում է արտահայտվել «Wall Street Journal»-ը: Ըստ այդ հրապարակման, Թուրքիայի վարչապետը նման գնահատական եւ մոտեցում արտահայտելով «ազդանշան է տալիս երկու երկրների հարաբերությունների նորմալացման եւ սահմանի վերաբացման ջանքերի սառեցվածության խորացման առնչությամբ»:

Հիշեցնենք, որ հուշարձանը կանգնեցվել է 2008-ին՝ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գործընթացի ամենաթեժ պահին, հայ-թուրքական սահմանից 40 կմ հեռու այնպես, որ Հայաստանից երեւում է 30-մետրանոց հուշարձանը, որի երկու մարդ ներկայացնող արձաններից մեկի ձեռքն այդպես էլ մնացել է չտեղադրված:

Ա. Հ.

Թոքաբորբ եւ ջրծաղիկ հիվանդություններ են գրանցվել

2011 թվականի հունվարի 1-9 սուր շնչառական վարակների եւ թոքաբորբերի առումով համաճարակային իրավիճակը եղել է համեմատաբար հանգիստ:

Նշված օրերի ընթացքում հանրապետության հիվանդանոցներ տեղափոխվել են 17 թոքաբորբով հիվանդ, որոնցից 3-ը լավացումով դուրս են գրվել, իսկ մնացածն ունեն առողջացման դրական դինամիկա:

Մայրաքաղաքի մի քանի մանկապարտեզներ փակվել են՝ ջրծաղիկ հիվանդության պատճառով: Հաշվի առնելով, որ ջրծաղկի դեմ պատվաստում չի արվում, եւ այդ հիվանդությունը տարածվում է շփման միջոցով, մանկաբույժները խորհուրդ են տալիս չշփվել ջրծաղիկով հիվանդի հետ, քանի որ այդ հիվանդության վարակի գաղտնի շրջանը տեւում է մինչեւ 21 օր: Ուստի մաշկի վրա ցան նկատելիս հարկավոր է հիվանդին առանձնացնել այլ երեխաներից:

Մ. ՄԱԿԱՐՅԱՆ

ՌԱՍԻՅՄ

Ղարաբաղյան պահածոները, Կրասնոդարի մարզը եւ Ադրբեջանը

Անցյալ տարվա դեկտեմբերի սկզբին Ռուսաստանում հրապարակվող «Երկրամաս» թերթը տեղեկացրեց, որ Կրասնոդարի խանութներում հայտնվել են «Արցախ Ֆրուտ» ընկերության արտադրած մրգային ու բանջարեղենային պահածոները: Ընկերությունը գործում է Ստեփանակերտում եւ արտադրում է ամենատարբեր պահածոներ՝ բնական մթերից: Այս հանգամանքը առաջացրել է ադրբեջանցիների՝ ընդհուպ երկրի ԱԳՆ-ի վրդովմունքը: Նույն «Երկրամաս» թերթից տեղեկանում ենք, որ Ադրբեջանի արտգործնախարարության մամլո քարտուղար Էլիսա Պոլուխովը հայտարարել է. «Ռուսաստանում Ադրբեջանի դեսպանատանը կհանձնարարվի հետաքննել երեւույթը: Եթե պարզվի, որ դա իրականություն է, ապա ադրբեջանական կողմը կանի անհրաժեշտ գործողություններ»: Ըստ ռուսաստանյան հայկական պարբերականի՝ Բաքվի «անհրաժեշտ գործողություններ» որպես կարելի է ընկալել այն, որ Իլհամ Ալիեւն անձամբ պատրաստվում է ուղերձով դիմել Ռուսաստանի ադրբեջանական համայնքին՝ բոյկոտելու «Արցախ Ֆրուտ»-ի արտադրանքը:

Հ. Ա.

Նոր հավակնություններ՞

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

«Ուղտը չէր գնում, մաղն էլ պոչից կապեցին», երբ մեկն իր կարեցածից մեծ գործ է բռնում, այսպես են ասում: Համենայն դեպս, դարաբաղցու խոսքում այս ասացվածքը կա:

Հիմա Ադրբեջանն է. տարեվերջին «Ազարբայջան» պաշտոնաթերթը Միացյալ Նահանգների «թերությունները ջրի երես հանող» մի հոդված է տպագրել: Գլխավոր եզրահանգումը, որ արել է կառավարության խոսափողը, հետեւյալն է. «Բարոյական իրավունք ունի՞ ԱՄՆ-ը բարոյականության դասեր տալու: Իհարկե ոչ»:

Որ ամերիկյան դիվանագիտական գրագրությունների մասնակի բացահայտումները խոցել են Ադրբեջանի արժանապատվությունը, դրանում թերեւս ոչ ոք չի կասկածում: Քանի որ նույնիսկ Ադրբեջանում են հասկանում, որ ոչինչ պատահական չի լինում: Որ եթե պետդեպարտամենտը թիրախ է ընտրել Իլհամ Ալիեւի նաեւ ընտանեկան հարցերը, ուրեմն երկու երկրների հարաբերություններում «ինչ-որ բան այն չէ»:

Բայց ի՞նչ իմաստ ունի՝ «վերադարձնել դիմանկարը»: Այսինքն՝ Ադրբեջանն այն երկի՞րն է, որ իրեն թույլ տա Միացյալ Նահանգներին հիշեցնել «սեփական մեղքերը»: Ընդհանրապես, պատշա՞ճ է, երբ այսօր որեւէ երկիր մյուսի հետ խոսի «ՏԱՍՍ-ը լիազորված է հայտարարել» ոճով:

Այս եւ այլ կարգի նրբությունները, սակայն, գնալով պակասում են պաշտոնական Բաքվի բառապաշարում: Փոխարենն արմատավորվում է մեծամտությունը: Հեռու գնալու կարիք չկա. ամանորյա ուղերձում Իլհամ Ալիեւն իրեն հռչակել է «բոլոր ադրբեջանցիների առաջնորդ»: Եվ երբ Իրանի խորհրդարանի պատգամավորը, որպես էթնիկ ազերի, հակադարձել է, թե «Իլհամ Ալիեւը միայն Ադրբեջանի նախագահն է», Բաքվից տանու քաղաքացեը նրան առաջարկել է «կազմակերպել հանրային կարծիքի հարցում եւ համոզվել, որ Իլհամ Ալիեւի վարկանիշն առնվազն հավասար է Իրանի առաջնորդներին»:

Ի՞նչ անուն տալ դրան: Թերեւս՝ տղայամտություն: Քանի որ Բաքվում գերազանց են հասկանում իրանական կողմի արձագանքի ենթատեքստը: Բանն այն է, որ Իլհամ Ալիեւի ուղերձը նվիրված էր ոչ միայն տարեմուտի, այլեւ՝ «ամբողջ աշխարհի ադրբեջանցիների համերաշխության» օրվան: Իսկ դա մի «տոն» է, որ սահմանվել է Հեյդար Ալիեւի կողմից՝ ի նշանավորումն 1989 թ. դեկտեմբերի 31-ի իրադարձությունների, երբ Նախիջեւանում բազմահազարանոց ամբոխն ավերել էր խորհրդահրանական սահմանի ինժեներական կառույցները, զանգվածաբար մտել Արաքս գետը:

Այսօր էլ Արաքսի ջրերում «մկրտություն ստանալը», մանավանդ Նախիջեւանում, դիտվում է որպես «ադրբեջանցիների համերաշխության օրվա տոնակատարության» արարողակարգի պարտադիր մաս, ինչը, բնականաբար, Իրանում ընկալվում է որպես անթափույց տարածքային հավակնություն: Եվ երբ իրանցի խորհրդարանականն Իլհամ Ալիեւին խորհուրդ է տալիս սահմանափակվել Ադրբեջանի նախագահի պաշտոնով, նա պարզ հասկացնում է, որ «Ադրբեջանի միավորումը» ցնորք է:

Տես էջ 8

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Գյուղոլորs. հաղաղող կաղրեր եւ ամլացող հողեր

Գյուղատնտեսության բարեփոխումների մասին խոսելը ՀՀ-ում վերածվել է նախարարափոխության խաղախականության

2008 թվականի այս օրը ՀՀ գյուղատնտեսության նախարարը Դավիթ Լոիյանն էր: 2009-ի նույն այս օրը նախարարի պաշտոնում արդեն Արամայիս Գրիգորյանն էր: 2010-ի դարձյալ այս օրը գյուղնախարարը Գեւասիմ Ալավերդյանն էր: 2011-ին արդեն նույն օրը պետական այս կառույցը նոր ղեկավար ունի, նախարարը Սերգո Կարապետյանն է: Երեք օրացուցային տարիների ընթացքում գյուղնախում 4-րդ բարձրագույն պաշտոնյայի ի հայտ գալը արդյոք հարկ է տրամաբանվա՞ծ համարել, ներկայացնել որպես բարեփոխումների իրականացման պարտադրած անհրաժեշտությո՞ւն: Առաջիկա մեկ տարում նորանշանակ նախարարը ամենայն հավանականությամբ կդահիճանի իր պաշտոնը, որը վստահաբար չի կարելի ասել եկող գարնանը կայանալիք խորհրդարանական ընտրություններից հետո: Բարձրագույն այս պաշտոնի խաղախականացումը, որն առնչվում է 3 մլն հայաստանցի ու դրա գրեթե եռակին կազմող արտերկրներում բնակվող հայազգի շահառուների ակնկալիքներին: ՀՀ իրենց հարազատներին ուղարկվող միլիարդավոր արժույթները շատ շուտ հայտնվում են ներմուծողների ձեռքերում, որի մի մասը օգտագործվում է նոր ներմուծումների նպատակով: Երկրի առեւտրային խիստ բացասական հաշվեկշռի մեջ զգալի է գյուղոլորտի դերը, որը պարզապես չի բխում հայության սպասումներից: Ասվածի մասնակի արդյունքն է 2007-ին եւ 2008-ի գարնանը գյուղոլորտում ծավալված գործընթացի պայմաններում, որոնք շոշափում էին գյուղխաղախականության հիմնախնդիրը, հացահատիկային մշակաբույսերի ու դրանց որոշակի մասի որպես լիարժեք անասնակեր օգտագործումը, գյուղնախարարի հրաժարականի անհասկանալի ընդունումը: Խնդրով մտահոգ հանրությանը տրամաբանված ոչինչ չներկայացվեց, իսկ պետական բարձրագույն պաշտոնի պատասխանատվության արդյունքը հայ մարդը տեսնում ու զգում է ամեն պահի. հողային, ջերմային ու ջրային լավագույն կարողունակության պայմաններում Հայաստան երկիրը դառնում է պարենային ապրանքների գրեթե բոլոր տեսակներով ներկրումների հաշվին գոյատեւող պետություն, դրանց կասկածելի որակի ու գների անվերջ բարձրացման պարագայում:

Բարի պաշտոնավարում մաղթենք նորանշանակ գյուղնախարարին, հանգի շահառուներս այլ ընտրություն չունենք: Սակայն հարցեր առաջադրելու հանրային իրավունքը պարտադրում է որոշակի պատասխաններ՝ ի՞նչ պահանջ է դրել ՀՀ նախագահը պարոն Ս. Կարապետյանի առջեւ եւ փոխադարձաբար ի՞նչ պայմաններով է վերջինս համաձայնել սանձնել անչափ պատասխանատու եւ պարտավորեցնող նախարարական պաշտոնը: Միամիտ չգտնվենք տվելու այն կարծիքին, թե այստեղ որոշիչ է եղել կուսակցության հանդեպ պարտքը: Այնքանով, որքանով ՀՀ գյուղոլորտում հիմնական խնդիր համարվում է հացահատիկային մշակաբույսերի ու կենդանական ծագման սննդատեսակների բավարար եւ մատչելի արտադրությունը, փորձենք հանրային ակնկալիքը ներկայացնել այս առումներով:

ՀՀ գյուղնախարարությունը, որը մշտապես է գտնվում երկրի բարձրագույն ղեկավարության ուշադրության կենտրոնում, իր բազմանդամ անձնակազմով, որը նախարարից զատ ղեկավարում են 5 փոխնախարարներ ու շուրջ 10 գիտության թեկնածու ադկոսոր վարչությունների պետեր, այս ներուժով երբեւէ հանրային տեսադաշտում չի գտնվում: Ընթերցողներն իրոք կտարակուսեն եւ կասկածի տակ կառնեն բարձր պաշտոններ զբաղեցնողների վերաբերյալ ներկայացվող փաստերը, հանգի նրանցից հազիվ 1-2-ին են տարվա ընթացքում հասցնում տեսնել: Էլ ավելի անորոշ են նրանց այցերը ՀՀ գյուղական համայնքներ, ուր ոչ հաճախ կարելի է ունկնդրել նախարարության գործունեության հասցեին դրական խոսքեր: Այցելություններից խուսափելը բացատրվում է մեկ հիմնական արդարացումով՝ հողի սեփականաշնորհումից հետո իրենք գյուղացուն հիմնարար ասելիքի իրավասություն չունեն: Փոխարենն ուրիշ հարց է փորձի փոխանակման պատրվակով արտերկրներ մեկնելը, միջազգային փորձագետների հետ սեմինարներ կազմակերպելը, ցուցահանդեսներ բացելը, վերամշակողներին պարգեւատրելը, տարաբնույթ միջոցառումներին նախագահելը: Համաշխարհային բանկի ու Հազարամյակի մարտահրավերների միջոցներով, ԱՄՆ-ի դեսպանատան ու ամենահաս Ռալֆ Յիրկյանի օժանդակությամբ ծավալվող աշխատանքներում այնպես գործ կա անելու, որ պետականորեն տրամադրված մեքենաների վառելիքն էլ չի հերիքում: Այսօրինակ պայմաններում թե ինչի է զորու նախարարը, հանրությունը կտեսնի առաջիկայում:

ՀՀ գյուղնախում էլ է ընդունված առաջնորդվել պատճառաբանությունների օգնությամբ: Գործելու համար որպես լուրջ խոչընդոտ նշվում է հողերի մասնատվածությունը: Սակայն ոչ մի պատասխան չկա, ասենք, բազմիցս հնչած այն հարցին, թե ինչպես են ճապոնացի հողագործները համանման մասնատվածության պայմաններում կարողանում իրենց ապահովել անհրաժեշտ 10-12 մլն տոննա բրնձով: Հայաստան երկիրը գյուղմասնագետները սակավահող են հռչակում, երբ 1 բնակչի հաշվով մեր վարելահողային կես կարողունակությունն ունեցող մի խումբ երկրներ միլիարդավոր դոլարների գյուղարտադրանք են արտահանում: Կամ. երբ է գյուղնախարարությունը պատրաստվում կատարել ՀՀ կառավարության որոշումը անասնագլխաքանակի հաշվառման ուղղությամբ: Նորանշանակ նախարարը որ թվականի համար է նախատեսում իր ճյուղային փոխնախարարներից պահանջել հացահատիկային մշակաբույսերի հեկտարից 6-7 տոննա բերք եւ 1 կովից տարեկան 7-8 հզ. տոննա կաթնատվություն: Կրկնվելո՞ւ է արդյոք իրողությունը, երբ նախորդ նախարարների օրոք կազմված ռազմավարական հռչակված փաստաթղթերում 2015-ի համար ցորենի միջին բերքատվություն հեկտարից կանխատեսվում է մոտ 3 տոննա, կովերի կաթնատվությունը՝ 2,5 տոննա: Նման ցուցանիշների համար հայոց մայրաքաղաքի կենտրոնում նման մասնագիտացված հաստատություն ունենալը աններելի շռայլություն է: Հայաստանաբնակներս տեղյակ ենք, որ այսօրվա բյուջեն հավաքվում է նաեւ մի կերպ գոյատեւող փոքր ու միջին գործարարների հաշվին, որի որոշակի մաս ծախսում է գյուղնախարարությունը: Տարեային աղետներից առավել հայ հողագործն ու անասնապահը տուժում են անելիքի անորոշությունից. մեկ կարտոֆիլի գերարտադրություն կա, եւ գնանկում է տեղի ունենում, մյուս անգամ խաղողն է շատ, եւ մթերելու համար պահանջվում է անձամբ ՀՀ նախագահի միջամտությունը եւ այսպես շարունակ: Թե ՀՀ որերորդ գյուղնախարարն է նախապայմաններ ստեղծելու երկրում բուսական յուղի արտադրություն ծավալելու ուղղությամբ, որքիսի հարց հետաքրքրում է ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու, մնում է օդում կախված: Չենք ասում ձիթաքցողի, այլ՝ արեւածաղկի ու եգիպտացորենի յուղերի: Վերջին այս մշակաբույսը Հայաստանում աճեցնողները հեկտարից առավելագույն արդյունավետություն են ապահովում, որը գյուղոլորտի պատասխանատուները չեն նկատում, այն խրախուսելը իրենց իրավասությունների շրջանակից դուրս խնդիր են համարում: Գերզարգացած գյուղոլորտ ունեցող ԱՄՆ-ում 1 միավոր ցորենի դիմաց 5-6 միավոր եգիպտացորենի հասիկ են արտադրում եւ դրա որոշակի քանակներ անասնակերի լիարժեք բաղադրիչ օգտագործելու արդյունքում անասնապահությունում աննախադեպ մթերատվություն են ապահովում, որում մենք համոզվում ենք նաեւ «Բուշի տոհիկներ» գնելիս: Մեկ տասնյակի է հասնում այն երկրների ցանկը, որտեղից տավարի ու խոզի միս է ՀՀ ներկրվում ու ամբողջ երշիկեղենն ու մսամթերքները պատրաստվում: Հայ հանրությունն այսօրինակ հարցերի պատասխան է ակնկալում, հույս տածելով, թե մշտապես հնչեցվող «նախարարության աշխատակազմում հիանալի մասնագետներ են ընդգրկված» գնահատականը կոնկրետ հիմնավորումներ է պարունակում: Առայժմ ցավալի է նշել, որ 3 օրացուցային տարում 4-րդ նախարարի պաշտոնավարումը այս կարծիքի օգտին չի խոսում, որից եզրակացություն անելը այսօրվա պահանջն ու հրամայականն է:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Հ.Գ. Հոդվածը գրվել է մինչ նոր նախարար նշանակելը, մասնակի լրացում է կատարվել Ս. Կարապետյանի նշանակվելուց հետո:

ՅԵՎԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ

Սաակաշվիլին հայկական եկեղեցում՝ մասնակից հունվարի 6-ի պատարագին. ի՞նչ ասել կուզի

Ժամանակը հայերիս բան չի սովորեցնում, իրականության ու փաստերի գնահատման փոխարեն հավատում ենք ամենապողուլիսական հայտարարություններին, հավատում ենք հույսով, թե ինչ-որ բան կփոխվի դեպի լավը: Վրաստանում հայկականության ու հայ եկեղեցու խնդիրների մասին կարելի է հազարավոր էջեր գրել, բայց արի ու տես, որ ամենահիմն, բայց բարի մի խոսք հույսեր ու ակնկալիքներ է ծնում, թե այդ հարցերը մի օր լուծում են ունենալու, մինչդեռ կյանքը բանիցս ապացուցել է, որ բաղդ-մեղդ խոսքերը միայն «փափուկ բարձ» են եւ ոչինչ ավելի:

«Հունվարի 6-ին, Ս. Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնին Թբիլիսիի Ս. Էջմիածին եկեղեցում պատարագ մատուցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Սրբազան արարողությանը ներկա էին Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին, պետական այրեր, նախագահի աշխատակազմի ներկայացուցիչներ եւ համայնքային գործիչներ: Վրաստանի անկախացումից հետո սա առաջին նախագահական այցն էր Հայ առաքելական եկեղեցի», այս մասին տեղեկացնում է Վիրահայոց թեմը:

Վազգեն եպիսկոպոսը Վրաստանի նախագահի ուշադրությունն է հրավիրել Վրաստանի հայությանը մտահոգող հիմնահարցերի վրա՝ Վիրահայոց թեմին եւ Վրաստանում գործող ավանդական մյուս կրոնական համայնքներին իրավաբանական կարգավիճակ տալու, հայկական պատմական եկեղեցիները թեմին վերադարձնելու եւ այդ տաճարների պահպանության առնչությամբ: «Իր ողջույնի խոսքն ու Ս. Ծննդյան շնորհավորանքները հայ ժողովրդին եւ Հայ առաքելական ուղղափառ սուրբ եկեղեցու հովվապետին ուղղեց Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին՝ կարեւորելով երկու եկեղեցիների դարավոր բարեկամությունն ու փոխհամագործակցությունը», նշված է հաղորդագրության մեջ՝ Սաակաշվիլուն Դավիթ Շինարարի հետ համեմատելու «համալրմամբ»:

Տոնական հանդիսությունը շարունակվել է Թբիլիսիի առաջնորդանիստ Ս. Գեւորգ եկեղեցում, որին ներկա են եղել Թբիլիսիի քաղաքապետ Գիգի Ուգուլավան, այլ պաշտոնատար անձինք: Ներկաներին ողջունել է, ի թիվս այլոց, նաեւ Գիգի Ուգուլավան, որի քաղաքապետությունն ընթանում է անգամ քաղաքային խորհրդում որեւէ մեկ հայի բացակայությամբ:

Եվ նույն այս օրերին Վրաստանի փոխարտգործնախարար Նինո Քալանթաձեն հայտարարություն է անում, թե հավանական է, որ վրացական կողմը ձեռնարկի Վրաստանում թուրքական պատմական հուշարձանների վերականգնումը, եւ դա այն ժամանակ, երբ հայկական ամեն ինչ այդ երկրում եթե ոչ վրացականացնելու, ապա հողին հավասարեցնելու քաղաքականությունը իրագործվում է բացահայտ՝ առանց հողարկումների:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արեւելյան գործընկերությունը՝ ԵՄ-ում Հունգարիայի նախագահության առաջնահերթություն

Եվրոպայի խորհրդում Հունգարիայի մեկնարկած նախագահության օրոք առաջնահերթություններից է լինելու նաեւ Արեւելյան գործընկերության ծրագրի խթանումը: Այս մասին հունվարի մեկից նախագահությունը սանձնած Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանը հայտարարեց անցյալ շաբաթ: Ըստ Եվրոմիության խորհրդի պաշտոնական կայքէջում տեղակայված հարցազրույցի, Հունգարիայի վարչապետը հայտարարել է, որ Արեւելյան գործընկերության նախագծի հաջողությունը այնպիսի միջոց է, որ կարող է մեծապես խթանել եվրոպական համայնքի զարգացումը:

«ԵՄ հունգարական նախագահությունն այս տարվա առաջին կեսի համար մեծապես կարեւորում է Արեւելյան գործընկերության խթանումը՝ որպես արտաքին քաղաքականության ամենակարեւոր նպատակներից մեկը. մենք կկազմակերպենք Արեւելյան գործընկերության գագաթաժողով, որ տեղի կունենա մայիսին», հայտարարել է Վիկտոր Օրբանը:

Վերջինս տեղեկացրել է, որ իր երկրի նախագահության ընթացքն առավել լավ նախապատրաստելու համար քննարկումներ է ունեցել ոչ միայն Եվրոմիության երկրների վարչապետների, այլեւ Արեւելյան գործընկերության երկրների ղեկավարների հետ: «Իմ տպավորությամբ, բոլորն էլ հետաքրքրված են ուժեղ Եվրոպա ունենալու հարցում, քանի որ դա է բոլոր ժողովուրդների աջակցության աղբյուրն ու հիմնարար ռեսուրսը», ասել է Օրբանը:

Եվրոմիության նախագահությունը Հունգարիան ստանձնել է 18 ամիս ժամկետով՝ Իսպանիայի (նախագահությունը ստանձնել է 2010-ի հունվարից) եւ Բելգիայի (նախագահությունը ստանձնել է 2010-ի հուլիսից) հետ համատեղ՝ եռանախագահության ձեւաչափով:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խնդակցություն

Մեր թերթի լրագրողներից Մարիետա Խաչատրյանը եւ ամուսինը՝ Մասիս Միխայելյանը բախտավորվել են երկրորդ թոռնիկով՝ **Եվա**: Մեր ջերմ խնդակցությունները՝

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Թուրք լրագրողի կեղծիքը՝ վերագրված ֆրանսիացի դերասանին

«Ես հայկական մանկապարտեզ եմ հաճախել, մեծացել եմ հայերի հետ... Ես ուղղակի չէի կարող նման խոսքեր ասել», այս հայտարարության հեղինակ, ֆրանսիացի երիտասարդ դերասան Գիյոմ Դելորմի համար թուրքական «Հյուրիեթ»-ին տված հարցազրույցում իրեն վերագրվող շատ խոսքեր ուղղակի անհավատալի են:

Դեռեւս դեկտեմբերի 19-ին Սամբուլում տված հարցազրույցի հրապարակման համաձայն, նախատեսվում է «Սուր եւ ծվի» ֆիլմի նկարահանումը, որտեղ էլ Գիյոմ Դելորմը, եթե համաձայնի, խաղալու է հայ երիտասարդի դեր: Ըստ ֆիլմի, հայ երիտասարդը եւ մի թուրք երիտասարդ սիրահարվում են նույն աղջկան: Գիյոմի հետ հարցազրույցի միայն այս հատվածն է, որ ներկայացնում է նկարահանվելիք ֆիլմի մանրամասները, համապատասխանում է իրականությանը:

Այդուհետեւ հոդվածում նշվում է, թե ֆրանսիացի դերասանն իբր ճնշադատել է հայոց ցեղասպանության ժխտումը որպես հանցանք հայտարարող ֆրանսիական օրենքը, իբր նման օրենքի ընդունումն անընդունելի է: Ավելին, ըստ թուրք լրագրողի հրապարակման, Գիյոմն իբր նշել է, թե Ֆրանսիան նման կեցվածքով անարդար է վերաբերվում Թուրքիային, թե իբր եղել է հայ-թուրքական բախում, բայց ոչ ցեղասպանություն:

Մինչդեռ իրականությունը տրամագծորեն հակառակն է, այսինքն՝ թուրքական լրատվամիջոցներում հայոց ցեղասպանության թեման թուրք լրագրողներին ամբողջությամբ նմանեցնում է ադրբեջանական լրագրողներին, որոնք կանգ չեն առնում ոչ մի կեղծարարության առաջ՝ անգամ բացահայտ: Ինչպես տեղեկացնում է *Ժան Էսֆիյանը* Ֆրանսիայից, որը փորձել է Գիյոմ Դելորմից ճշտել «Հյուրիեթ»-ի հրապարակման իսկությունը, ֆրանսիացի դերասանը Էսֆիյանին հայտարարել է. «Ես նման բաներ չեմ ասել: Ես ամբողջությամբ ճանաչում եմ Հայոց ցեղասպանությունը: Ես մեծացել եմ Մարսելում հայերի հետ, մի մանկապարտեզում, որ հայկական էր: Ես հայ ընկերներ ունեմ: Հրապարակումը այնպիսին է, որ ես նման բան ուղղակի չէի կարող ասել, դա ոչ իմ համոզմունքների հետ է համընկնում, ոչ իմ կրթության», տեղեկացրել է Գիյոմ Դելորմը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԶԳ

Մեկնաբանություն

2010 հուսադրող սկի՞զբ Հայաստանի արդյունաբերության համար

Կառավարության 2010-ի վերջին նիստում Հայաստանի վարչապետ **Տիգրան Սարգսյանն** ամփոփեց անցնող տարին, ներկայացնելով նաեւ կառավարության իրականացրած քայլերը տարբեր ոլորտներում: Վարչապետի ելույթի բոլոր մանրամասներին անդրադառնալու անհրաժեշտություն թերեւս չկա, այդուհանդերձ, նրա մասնակցած որոշ իրադարձություններ հարկ է առանձնացնել:

Տնտեսական աճի ցուցանիշն, ըստ Տիգրան Սարգսյանի, 2010-ին 2,6 տոկոսին մոտ է լինելու, որը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության աճով: Ինչպես հայտնի է, մինչեւ 2008-ի վերջը, Հայաստանում մի քանի տարի շարունակ երկնիշ տնտեսական աճ էր արձանագրվում: Դա տեղի էր ունենում գլխավորապես մեկ ոլորտի՝ շինարարության բուռն զարգացման շնորհիվ: Երբ տնտեսության որեւէ ճյուղ զարգանում է, դա ինքնին դրական երեւույթ է՝ հակառակ շինարարության աճը որպես բացասական երեւույթ ներկայացնող տեսակետների: Բանն այն է, որ այս ճյուղի զարգացումն իր հետեւից տանում էր նաեւ այլ ճյուղերի, մասնավորապես շինանյութերի արդյունաբերության զարգացման: Միաժամանակ մեր երկրում առկա է նաեւ բնակարանային պայմանների բարելավման լուրջ պահանջարկ: Եվ հավանական է, որ եթե տնտեսական ճգնաժամը չխանգարեր, այսպես կոչված էլիտար շենքերի շինարարությանը կիսեւեւին ոչ այնքան թանկարժեք բնակելիների կառուցումը:

Այս ամենով հանդերձ, որեւէ երկրի տնտեսական զարգացումը պետք է լինի դիվերսիֆիկացված եւ կախված չլինի միայն մեկ ճյուղից: Ճգնաժամը մեկ անգամ եւս հաստատեց այդ ճշմարտությունը: Հայաստանի ամենաարագ զարգացող ճյուղը 2009-ին դարձավ նրա կտրուկ տնտեսական անկման հիմնական պատճառը, ինչն առավել հրատապ դարձրեց երկրի տնտեսության դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը: Ճգնաժամային 2009-ին կառավարությունը հայտարարեց այս ուղղությամբ իրականացվելիք ծրագրերի մասին: Գուցե մեկ տարին դեռեւս վաղ է շոշափելի արդյունքներ ակնկալելու այդ ծրագրերից, համենայն դեպս, արձանագրված վիճակագրական ցուցանիշները հուսադրող

միտումներ ցույց տվեցին: Այն դեպքում, երբ գյուղատնտեսությունը արձանագրեց 14,5 տոկոս, իսկ երբեմնի զարգացող շինարարությունը՝ 4 տոկոս անկում ճգնաժամային 2009-ի համեմատ, արդյունաբերության աճը կազմեց 9-10 տոկոս: Այս եւ ենթակառուցվածքների (ճանապարհների եւ ջրագծերի կառուցում, կամի եւ հեռահաղորդակցության համակարգի զարգացում եւ այլն) զարգացման առումներով վարչապետը թերեւս կարող է խոսել կառավարության ջանքերի հաջողությունների մասին:

Իհարկե, պետք է նշել նաեւ, որ արդյունաբերության զարգացմանը էապես նպաստեց միջազգային շուկայում մետաղների գների բարձրացումը, որոնք գերազանցում են անգամ նախաճգնաժամային գներին, որ արդյունաբերության մեջ դեռեւս երկու հիմնական ճյուղեր՝ հանքարդյունաբերությունն ու սննդարդյունաբերությունը զարգացածության որոշակի մակարդակ ունեն, որոնց ձգտում են միանալ տեղեկատվական տեխնոլոգիաները: Մյուս կողմից էլ, չի կարելի ժխտել, որ եթե չլիներ պետական աջակցությունը (ընդհուպ բյուջեից տրամադրվող վարկերի տեսքով) վերոնշյալ ոլորտների ձեռնարկություններին, դժվար է ասել, թե ինչ արդյունքներ կունենային նրանք հետճգնաժամային տարում:

Արդյունաբերության, տվյալ դեպքում՝ հանքարդյունաբերության մեջ ավելի մեծ ավելացված արժեքով արդյունք արձանագրելու համար, սակայն, կառավարության առջեւ այժմ ծառացած է մեկ այլ կարեւոր հրամայական, որի մասին խոսվում է, բայց կոնկրետ քայլեր չեն կատարվում: Խոսքը հանքահարի խտանյութ ստանալուց հետո, տեղում մետաղամշակման կայացման եւ զարգացմանն ուղղված ծրագրի մասին է: Որքան էլ դա աբխատատար եւ ոչ ստանդարտ լուծումներ պահանջող գործընթաց է, հարկ է պայմաններ ստեղծել երկրի բնական ռեսուրսներից առավելագույն արդյունք ստանալու, տեղում մետաղաձուլությունը տնտեսապես շահավետ դարձնելու, հանքարդյունաբերություն-մետաղամշակում-քիմիական արդյունաբերություն-սարքաշինություն շաղկապված զարգացումն ապահովելու համար: Երեւի թե կարիք չկա ասելու, թե դա ինչ ազդեցություն կունենա երկրի տնտեսության մնացած ճյուղերի վրա:

Արդյունաբերության ոլորտում 2010-ին կատարվածի մասին խոսելիս Տիգրան Սարգսյանն ամփոփիչ խոսքում հիշատակեց անցյալ տարի իրագործված մի քանի խոշոր ներդրումային նախագծերի մասին, տեղեկացնելով, որ 11 ընկերություններ 29 մլրդ դրամի ներդրումներ են կատարել: Օգտվելով 300 մլն դրամից ավելի ներդրումների դեպքում ավելացված արժեքի հարկի վճարման հետաձգման ռեժիմից, ինչը նույնպես կառավարության հակաճգնաժամային միջոցառումներից էր, այդ ընկերությունների գերակշիռ մասը ստեղծել է նոր արտադրություններ, այդ թվում՝ ապակյա տարաների, հանքային ջրերի, շարքի, մարտկոցների արտադրության, հանքահարի վերամշակման, ադամանդի մշակման: Սրանց նշանակությունը կարեւոր է ոչ միայն նրանով, որ մեկ տարում գործարկվել են մեծ հզորություններ եւ արտահանման հնարավորություններ ունեցող, արդյունաբերության տարբեր ճյուղեր ներկայացնող միանգամից մի քանի ձեռնարկություններ, այլ որ նման բան տեղի չէր ունենում անգամ տնտեսական երկնիշ աճի տարիներից որեւէ մեկի ընթացքում: Դա թույլ է տալիս հուսալ, որ Հայաստանը առաջիկայում կրկին կարող է դառնալ արդյունաբերական երկիր: Պետք է միայն հետեւողական լինել եւ, ինչպես արդեն նշեցինք, չվարանել այդ նպատակին հասնելու համար ոչ ստանդարտ լուծումներ իրագործելուց:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Թանկացումներ եւ... ազգային անվտանգությանը հետամուտ

2010 թվականի վերջին շաբաթն է, սովորական նախատոնական կամ տոնական մի օր: Հեռատեսիլն, ինչպես միշտ, շատ է տեղեկացնել աբխարհի այս թե այն մասում տեղի ունեցող աղետների ու արհավիրքների մասին: Եվ փառք Աստծո, որ մեր երկրում այդպիսիք չկան. ոչ երկրաշարժ, ոչ ջրհեղեղ, ոչ էլ՝ պատերազմ...:

...Ոչ էլ «չոմուլակ» անվամբ համաճարակն է մեկ օրում սրբել-տարել հանրապետության բոլոր հավերին, եւ կամ ընտանի այդ թռչնատեսակը համատարած գործադուլ ծավալել՝ կերակրային կամ վանդակային պայմանները բարելավելու արդարացի պահանջով: Ու չնայած այս ամենին, մայրաքաղաքի բոլոր խանութներում մատակարարման ընդհատման պատճառով ամբողջ օրվա ընթացքում դադարեցված էր ձվի վաճառքը, իսկ մարդիկ, գիտակցելով սպասվող հերթական թանկացումը, անասելի վրդովված էին: «Դե, ամեն ինչ պարզ է,- խոսում էր նրանցից մեկը,- սկզբում «մարկետինգ» են անում, այսինքն՝ նստում, հաշվում են, թե երկրում օրական որքան ձու է սպառվում ու հետո արդեն հաշվում են, որ եթե դրա գինը այսքան դրամով բարձրացնեն՝ ուրեմն ամեն մեկին այսքան լրացուցիչ փող կմնա: Հետո արդեն «մշակում» են «բիզնես-պլան», թե

ոնց անեն, որ ձվի շուկան ամբողջությամբ վերցնեն իրենց վերահսկողության ներքո եւ դուրս մղեն մանր ու միջին արտադրողներին՝ ինչն էլ արհեստականորեն գին իջեցնելու միջոցով իրականացվեց վերջերս: Ու հիմա ինչ գին ուզեն, կդնեն, ասենք՝ հատը 1000 դրամ...»:

Դե, սպասենք, թե եվրոինտեգրվող մեր երկրի սննդամթերքի հերթական անկանխատեսելի թանկացման հավանաբար դարձյալ երկնիշ տոկոսը որքան կկազմի: Մենք, ի տարբերություն եվրոպացիների, արդեն վարժվել ենք բոլոր անակնկալներին: Մեր մեջ նվաղել են հույսն ու հավատը, եւ ենթադրաբար այս է պատճառը, որ մեր փողոցների զարդարանքներն ու ամանորյա առօրյան, դարձյալ ի տարբերություն եվրոպականի, բացարձակապես չեն առնչվում տոնի միակ եւ հիմնական թեմային՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդին:

Սակայն կուզենայի խնդրո առարկան դիտարկել այլ տեսանկյունից: Փաստորեն Հայաստանում առկա է մի այնպիսի կառույց կամ ուժ, որն ի զորու է արգելել սննդամթերքի կամ կենսագործունեության համար անհրաժեշտ այլ միջոցների մատակարարումը ազգաբնակչությանը: Ու եթե երեկ դա ձուն էր, ապա չի բացառվում, որ վաղը կլինի հացը կամ... ջրամատակարարումը, գազամատակարարումը, էլեկտրամատակարարումը, դեղավաճառքը: Փաստորեն հանրապետությունում կա հնարավորություն կազմալուծելու եւ ջլատելու ողջ պետությունը, որի համար առիթը կարող է բաց չթողնել նաեւ թշնամին՝ նավթադոլարներ տրամադրելով դոլարապաշտ մեր անկուշտներին:

Վստահ եմ, որ հարցն ազգային անվտանգության պետական կառույցների ուշադրության տիրույթում է, իսկ եթե ոչ, ուրեմն նրանց պրոցող հայացքից չի կարող վրիպել այս հոդվածը: Ուստի ակնկալում ենք համապատասխան գործողություններ եւ իրազեկում հանրությանը:

Քաղաքացիների վստահությունը արդարության եւ պետության հանդեպ՝ ազգային անվտանգության կարեւորագույն խնդիրներից է:

...Եգիպտոսի Հանրապետության առաջին վարչապետ, պետական ականավոր գործիչ, դատաիրավական բարեփոխիչ, Սուեզի ջրանցքի նախագիծն իրագործող, հայության նվիրյալ, հայազգի Նուբար Փաշային են պատկանում եւ Ալեքսանդրիայի Հայ առաքելական եկեղեցու անմիջական հարեւանությամբ կանգնեցված նրա հուշարձանին են սեղմված սույն խոսքերը.

«Արդարությունը հիմքն է ամեն պետության»:

ԱՇՈՏ ՎԱՎԵՅԱՆ

ԱԿՆԱՐԿ

50 ազնիվ մարդու պահանջարկ

1-ին էջից

Անցած տարեվերջին այս կյանքից Կիմ Երիցյանը ուրիշ շնորհալի հայերի տարավ իր հետեւից՝ արդեն այս նոր տարվա մեջ. նոր տարվա առաջին տասնօրյակում՝ մեզանից հեռացավ դերասանուհի եւ բեմադրիչ Տաթեւիկ Ղափլանյանը, որի «Վայրի աղջիկը» մի ողջ սերնդի շունչն էր հեռուստաէկրանին: Նրան հետեւեցին Անահիտ Բայանդուրը, որը Մարո Մարգարյանի դուստրն էր, թարգմանչուհի եւ հասարակական գործիչ, եւ մասնագետ Օհան Դուրյանը, որ որպես դիրիժոր աշխարհաքաղաքացի լինելով՝ միաժամանակ խորապես հայեցի եւ հայրենասեր մարդ էր եւ խորհրդանշում էր հայ մարդու ճակատագիրը. Երուսաղեմում ծնված, եվրոպաներում ուսում ստացած, Լայպցիգում օպերա ղեկավարած ու միջազգային ճանաչման արժանացած մասնագետն հայրենիք էր վերադարձել հայրենի երաժշտական արվեստը բարձրացնելու համար: Երեկ նրան էլ ուղեկցեցինք մյուս կյանք, ուր, հուսով եմ, Աստված նրա համար աղաղակվել է ազգերի վեհացման գործին նվիրյալ մարդկանց բաժին մեսաերկինքը: Փաստորեն մահերի առումով հին տարուց նոր տարի սահուն անցումն աղաղակվեց: Սակայն լուսավորը, կյանքը, այնուամենայնիվ, հաղթում է, եւ ոչ միայն հեքիաթում կամ հոլիվուդյան ֆիլմերում. ի՞նչ արժե այն լուրը, որ հունվարի առաջին տասնօրյակում Երեւանի ծննդատներում ծնվել է 485 երեխա, այդ թվում՝ իմ թոռնուհի Եվա Միխայելյանը այն 229 աղջիկների թվում, որոնց հավասարակշռում են 258 տղա նորածինները: Ինչ իմանաս՝ նրանց մեջ չէ՞ արդյոք մի նոր Օհան Դուրյան:

Ընդհանուր առմամբ հետարձակուրդային կյանքը դեռ ռիթմի մեջ չի մտնում, ասուլիսասեր մեր քաղաքաններին դեռ հրավիրող չկա՝ իրենց մտքի գոհարները շաղ տալու, վաղը-մյուս օրը ասուլիսատները կարթնանան, ասուլիսավորները նորից կսկսեն խոսել քաղաքական դաշտի վերադասավորումներից, նոր նշանակումներից եւ նոր պաշտոնանկություններից (որոնք անպայման հետեւելու են), մեր արտաքին քաղաքական ձեռքբերումներից կամ պարտություններից՝ իրենց դավանած քաղաքական ուժի հանգույն:

Կարթնանան, երկիրը կմտնի առօրյա հոգսերի տակ, իսկ հոգսերն իրոք, որ շատ են: Առայժմ ԱԼՄ-ի եթերազրկման հեռանկարի հետ անհաշտ Տիգրան Կարապետյանն է ակտիվ, ու նրա չափավոր ու կենտրոնամետ քաղաքականությունից ոչինչ չի մնացել, քանի որ մինչեւ ցավը դուռը չծեծի, ո՞վ կիմանա այդ ցավի բովանդակության մասին. ասում է՝ «Անարդարության դեմ ենք բողոքում» (ընդհանո՛ւր անարդարության), ասում է՝ «Ոչ բռնապետությանը, մի թալանեք եւ մի հալածեք ժողովրդին», բա՞, իմա՝ մի փակեք ԱԼՄ-ն: Իսկ ԱԼՄ-ն, ՀՌԱՀ-ի որոշմամբ, հունվարի 20-ից եթեր չի ունենա արդեն, մեկ օր առաջ էլ դեռ հանրահավաք է անելու: Եվ լավ էլ անելու է:

Հավի ձվի շուկայում անցած տարեվերջյան աժիոտաժը ցույց տվեց, որ ոչինչ եւ ոչ մի բարեփոխում չի ազդում մերոնց վրա, նրանք սիրում են կարճ փողեր՝ հենց նույն պահին, մի քանի օրում, արծաթե սկուտեղով եւ գների տատանման տեսքով՝ դա կլինի դոլար, հավի ձու, թե ուղտի կաշի, միեւնույնն է: Ու հազիվ թե հոգար նախարարներին ու նախարարությունների առանցքային պաշտոնյաներին 50 ազնիվ, անշահախնդիր պրոֆեսիոնալներով փոխարինելու մտմտուքը, որը բարձրաձայնվել է քաղաքական վերին շրջանակներում, հնարավոր դարձնի ի նպաստ սպառողի բացառելու արծաթե սկուտեղով վայրկենական գերշահույթ ստանալու մերոնց վաստակասիրությունը, վաստակասիրություններից որոշեական հնարավոր չէ ազատվել, ավանդույթ է պետք: Եւ այստեղ ոչինչ չի կարող անել հոգար նախարարի եւ ոչ մի փոխարինում, ոչ էլ հոգարների ինստիտուտն արտատպիլ անելու միջոցով դա տեղի կունենա: Նախարար գիտեմ, որ ոլորտի հետ կապ չունեցող իր մոր ընկերուհուն է պաշտոն տալիս, այսինքն՝ հոգարների եւ մորքուրների ինստիտուտը Հայաստանում լավ էլ աշխատում է, էդ հոգարներն ու մորքուրներն էլ իրենց հոգարներն ու մորքուրներն ունեն, ձեռքը ձեռք է լվանում, մի խոսքով՝ գիտեք հայտնի խոսքը: Սակայն հետաքրքրական մի մանրամասն՝ բանն այն է, որ 50 ազնիվ ու անշահախնդիր պրոֆեսիոնալ ունենալու հարցը դիտարկվել է հետեւյալ պատուհանից. «եթե ունենայի 50 ազնիվ մարդ»: Այսինքն... այդ 50 ազնիվ մարդ էլ չունե՞ք (փամփուշտ մի՞ չունի): Ի դեպ, այդ մտմտուքը բարձրաձայնելուց եւ Գերասիմ Ալավերդյանի պաշտոնանկության լուրերի շրջանառվելուց հետո հենց դեկտեմբերի ամենավերջին օրը պաշտոնանկվեց գյուղնախարարը: Հիմա մնում է, որ նորանշանակ գյուղնախարար Սերգո Կարապետյանն էլ հոգար դուրս չգա եւ որ ասում է՝ լուծ է քաշելու, գյուղատնտեսության փոխարեն միայն սեփական տնտեսությունը չզարգացնի: Իսկ թե ի՞նչ կար անցած տարեվերջին մի շարք նախարարների, մարզպետների եւ պաշտոնյաների փոփոխության վերաբերյալ շրջանառվող լուրերի տակ՝ երեւի շատ շուտով կիմանանք, սակայն հայկական արիալի փորձը ցույց է տալիս, որ լուրերի մեծ մասն իրականություն է դառնում:

Իսկ տարեվերջին նորից ուժգին դրսեւորված մտատանջությունը, թե արդյո՞ք միասին են Սերժն ու Ռոբերտը, ու դրանից է կախված լինելու՝ ո՞վ, ո՞ր քաղաքական ուժը կդառնա ընդդիմադիր, ո՞վ կմնա նախագահ Սարգսյանի կողքին, ինչպե՞ս կվերադասավորվեն քաղաքական ուժերը՝ չենք կարող այս պահին փարատել, այդ մտատանջությունը ամենակտուալներից է հենց այսօրվանից եւ մոտակա մի քանի ամիսներին: Քաղաքական տվայտանքների մեջ եղողներին ընդամենը հիշեցնեմ մի պարզ բանաձեւ, որ գործել է Հայաստանում, ու դա չնկատողները միայն փորձի կամ տեղեկատվության պակաս ունեն. ժամանակին Տեր-Պետրոսյանը իշխանությունը սահուն հանձնեց Ռոբերտ Քոչարյանին՝ նախ պայմանավորվեցին, հետո հանձնեց: Սահուն անցումն ապահովվեց նաեւ Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյան պարագայում: Եթե վերջին երկուսի միջեւ հակասություններ կան, դրանք պետք է որ միայն տակտիկական լինեն եւ վերաբերեն մասնավոր խնդիրների. ասում ենք եւ ասել ենք՝ չե՛ն կարող երկրի ղեկավար եղած մարդիկ ընդհանուր հայցք չունենալ շատ խնդիրների վերաբերյալ կամ միմյանց հետ չշփվել: Մնացածն արդեն հասարակությանը տրվում է «Հացի եւ տեսարանների» ձեւով : Սա որպես մասնավոր փորձի եւ տեղեկատվության փոխանցում, մնացածին կհետեւենք:

ՅԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«**Ազգի**» խմբագրակազմը խորապես ցավակցում է թերթի երկարամյա հեղինակ, երաժշտագետ, Երեւանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Սվետլանա Սարգսյանին՝ սիրելի մոր՝

Արուս Հարությունի Սարգսյանի

մահվան կապակցությամբ:

ԱԶԳ **Նախագնացություն**

«Արմենիա»-ի արեւային արահետը

Դե, երկրագնդի ծովայիններից էլ ո՞վ է նման բան տեսել: «Արմենիա»-ի անձնակազմից բացի՝ էլ ո՞վ: Քամին համընթաց է (փա՜ռք fեզ, Աստված): Նավը դանդաղ խրվում է ահռելի ալիքի մեջ, որը ծանրորեն բարձրացնում է միանգամից ողջ քթամասը: Ապա, հսկայական փուչիկի պես, ալիքը ոչ թե պայթում, այլ լողացրիվ է լինում, եւ նավի քիթը շտմփոցով ընկնում է առաջացած փոսը: Հիշեցնենք, որ այդ ժամանակ նավը ընթանում է (տվյալ դեպքում) աջ թեքումով, մինչեւ «ամենաթույլասրելի» անկյան տակ: Եվ այդ բոլոր շարժումները առագաստանավի հետ կրկնում է մարմնդ, հաճելի զգացողություն ստանալով ողնուցային ռիթմիկ ճոճքից: Լավ տեսանելի ու լսելի է, թե ինչպես են ոռնացող քամու եւ թավագլոր ալիքների թնդյունի մեջ, համարյա սեղմված երկու նավակողերին, սրընթաց հրթիռների պես լողում դարչնագույն դելֆինների խմբերը:

Դե, ի՞նչ կա որ: Այդ ամենը դարեր շարունակ բազմիցս դիտարկել են ծովագնացները: Բայց ես ասելիքս չեմ ավարտել: Հաճույքով եմ ձգում այդ պահը, քանզի այն, ինչ մենք ենք տեսնում հիմա, երբեք ոչ ոք չի տեսել: Ես կանգնած եմ կոկպիտում (հիշեցնենք, որ դա միակ հարթ, ճիշտ է՝ փոքր, տեղն է ընդհանուր նավասենյակի եւ նավախելի ղեկային տարածքի միջեւ) եւ ուշադիր հետեւում եմ այդ ողջ կախարդանքին: Առջեւում, կայմի ստորին մասից այն կողմ, քթամասի ողջ տախտակամածը ներկված է նարնջավարդագույնով: Ամեն ինչ: Ե՛վ կնեխտները, ե՛ւ լյուկերի պլաստիկե թափանցիկ կափարիչները, ե՛ւ կապույտ ծածկոցի տակ գտնվող ռետինե մակույկը, նավախելին հենված սպիտակ շարժիչով: Եվ այդ ամենն իրոք կախարդական վրձնով ներկված է ասես մայրամուտի ներկապնակից վերցված գույնով: Եվ այդ ողջ պատկերը, երկու կողմից շրջանակված ճոպանազարդ կողերով, անսովոր ձեւ է ստանում: Ողջ առջեւի մասը կտրուկ նեղանում է, հենց քթի մոտ կազմելով սուր անկյուն: Հենց այդ պատճառով էլ տախտակամածի ընդհանուր մակերեսը քսան մետրով փոքր է «Կիլիկիա»-ից: Ահա այդպիսի սուրանկյուն կտավ է փռված մեր առջեւ, ժամանակ առ ժամանակ երփներանգ գույներ ստանալով: Եվ իրոք, բոլոր ժամանակների բոլոր ծովայիններից էլ ո՞վ կարող էր նման բան տեսնել: Վերջի-վերջո, այդ ամենը մի ինչ-որ տեսողական խաբկանք չէ: Դա մեր կյանքի իրողությունն է: Անտեսանելի նկարիչը ինքը Արեգակն է, անտեսանելի վրձինը՝ կարմիր-կապույտ-նարնջագույն, քսանվեցմետրանոց առագաստը, որը «Արմենիա»-ի վրա խորհրդանշում է Հայաստանի դրոշը: Ասեմ, թե այդ ամենն ինչպես է կատարվում եւ ինչ պայմաններում: Դրա համար պետք է, որ նավը շարժվի խստիվ դեպի արեւմուտք, այսինքն՝ ուղիղ դեպի մայր մտնող արեւը: Լավագույն դեպքում ամբողջ պատառիկ չպետք է լինի կապույտ երկնքում, եւ փչի սառը, համընթաց քամի, բացառելով մեզ ու մառախուղը: Պետք է, որ արեւի թեք ճառագայթները տախտակամած թափանցեն եռագույն առագաստի միջով: Բայց թափանցելով, նրանք՝ ինչպես կինոխցիկում, տախտակամած-էկրան են տեղափոխում չտեսնված մի ներկապնակի վառ կարմիրը, վառ կապույտը, վառ նարնջագույնը: Մի խոսքով, պետք է ունենալ այնպիսի դրոշ, ինչպիսին մենք ունենք, պետք է ունենալ այնպիսի առագաստ, ինչպիսին մենք ունենք, ստեղծելու համար, ինչպես Բալզակն է գրել՝ «չտեսնված գլուխգործոց»: Գուցե դրա պես ինչ-որ մի բան էր փորձել մարդկային պատմության մեջ տեսնել զարմանալիորեն բնական արձակագիր Ալեքսանդր Գրինը, ստեղծելով անկրկնելի «Ալ առագաստներ»-ը: Բայց դա արդեն հանճարի երեւակայության մեջ էր:

Այնպես որ՝ իրոք մեզանից բաց ոչ ոք չէր կարող տեսնել «դա»: Հայկն այդ ամենը լուսանկարում էր: Բայց կինոխցիկ էր հարկավոր: Եվ ես այդ բոլորներին չէի կարող չարթնացնել մեր օրերասոր Սամվել Բաբասյանին, թեեւ հերթափոխից հետո ինձին կարելի է արթնացնել միայն համականչի դեպքում: Իսկ ո՞վ ասաց, թե գլուխգործոցի ստեղծումը ավրալային առիթ չէ: Բաբասը սկզբում ինքնս աչքերով շուրջը նայեց, ապա ինձ՝ երախտագիտությամբ, եւ վազեց յիրիկյանական խցիկը բերելու (ի թիվս մեծաքանակ լուսանկարչական եւ տեսասարքավորումների, այդ հեռուսախցիկը «Արմենիա»-ի անձնակազմին է նվիրել «Վիվասելի» գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը): Երկար դեսուդեն էր քայլում տախտակամածով: Հաճախ Պուշկինի (Մուշեղ Բարսեղյանին) խնդրում էր փոքր-ինչ փոխել հալսը մեկ այս, մեկ այն կողմի վրա: Եվ Հայկի հետ միասին սկսեց «գեղանկարչական» աշխատանքը: Ես նայեցի ժամացույցին: 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ժամը 17-ն անց է քսան րոպե: Ամենաերկար օրը Հարավային կիսագնդում: Հայաստանում դեկտեմբերի 23-ին 0 ժամ երեսուն րոպեին ամենաերկար գիշերն է Հյուսիսային կիսագնդում: Չէ՞ որ սա էլ հետաքրքրական ու եզակի զուգադիպություն է: Մի ինչ-որ պահ ես աշխատեցի, այսպես ասած՝ միանգամից ամբողջացնել այդ տիեզերա-մոլորակային պատկերը եւ մտածեցի. «Գուցե հենց սա է երջանկությունը»: Սակայն, ինչպես հաճախ է մեզ բոլորիս հետ պատահում, հենց նման րոպեներին ինչ-որ մի բան սկսում է կեղեքել սիրտդ ու հոգիդ: Պարզվում է՝ անհարմար է, անպատեհ եւ նույնիսկ անազնիվ՝ երջանիկ լինել այն ժամանակ, երբ շուրջդ հիշում ես, որ դեռ չեն սպիացել հազարավոր ու հազարավոր մայրերի ու այրիների հոգու վերքերը, եւ որոնք սեւ զգեստները չհանեցին Արցախյան պատերազմից հետո:

Արդեն քանի՞սարի ես ճամփորդում եմ ողջ աշխարհով, այցելելով հայկական օջախներ, համայնքներ, գաղութներ, մանավանդ լիբանանյան պատերազմի ժամանակ եւ միշտ ակնբախորեն տեսնում, որ ցեղասպանություն վերապրած մարդկանց երրորդ, նույնիսկ չորրորդ սերնդի վերքերն այդպես էլ չեն սպիանում: Այո, ուրախ ու աղմկոտ հարսանիքներ են անում, նշում են Մայրության, սիրո եւ գեղեցկության, Վարդանանց, Շուշիի եւ Անկախության օրվա տոները, բայց միեւնույնն է, երբ խոսում են «հայի աչքեր» երեւույթի ու հանելուկի մասին, բոլորովին էլ նկատի չունեն անատոմիան կամ ֆիզիոլոգիան, այլ միայն հոգին ու պատմությունը, հիշողությունն ու հույսը: Մենք այդպիսին ենք: Ու դրա դեմ ճար չկա: Մեզ պետք են հաղթանակներ: Նոր հաղթանակներ: Մենք պետք է նորից սովորենք դառնալ մեր ճակատագրի ու ազատության, մեր անկախության ու, գլխավորը՝ մեր հաղթանակի տերերը: Պետք է թափ տանք մեզ ու սթափվենք: Պետք է սովորենք մեր դրոշի գույներում տեսնել ոչ թե պարզապես ծիածանի մասնիկներ, այլ գործուն հաղթանակի խորհրդանիշ: Մեզ օլիմպիական շանսներ են պետք նույնիսկ նրա համար, որպեսզի տեսնենք, թե ինչպես են մեր հայրենիքից հեռու բարձրացնում հարազատ դրոշը եւ հնչեցնում հարազատ օրհներգի մեղեդին: Մենք ամեն ինչ պետք է անենք, որ մեր երկիրը բարի ճանաչելիություն ձեռք բերի: Մենք պետք է հիշենք, որ բոլորովին էլ պատահական չէր, որ Հայրենական պատերազմի ամենածանր օրերին հենց հոգեբաններն առաջարկեցին վերականգնել ֆուտբոլի եւ այլ մարզաձեւերի երկրի առաջնությունները, բացել նկարչական ցուցահանդեսներ, հիմնել գիտությունների ազգային ակադեմիաներ: Այդ ամենն անհրաժեշտ էր, որպեսզի առարկայանա հաղթանակի հավատը համաժողովրդական հրեշավոր վշտի խորադատկերին: Ես չեմ հասկանում, երբ հայ բանաստեղծն իր սիրեցյալին գրում է. «Առանց քեզ ես թուղթ եմ՝ առանց գրիչ, ես հարսանիք եմ՝ առանց գինի, ես Բյուրական եմ՝ առանց ասղադիտակի, ես սոխակ եմ՝ առանց երգի, ես նկար եմ՝ առանց շրջանակի...»: Եվ այլն, եւ այլն: Եվ հանկարծ՝ «Առանց քեզ նույնն եմ, ինչ հայն առանց վշտի»: Այո, դա այդպես է: Եվ դա բոլորովին չի նսեմացնում, չի սոսրացնում հային: Խոսքը ճակատագրի մասին է, անխուսափելիության մասին: Խոսքը նույնիսկ այն որոշակի փիլիսոփայության մասին է, որը պարտավորեցնում է գիտակցել. արա ամեն ինչ, որպեսզի երջանկությունը գա, բայց քանի դեռ չի եկել, պատրաստ եղիր ապրել առանց դրա: Կգա՛: Անպայման կգա, եթե գիտակցում ես, որ արեւը մայր է մտնում միայն նրա համար, որ նորից ծագի: Օվկիանոսում մենք ոչ միայն պարզապես համոզվում ենք դրանում ամեն օր: Ամեն առավոտ դիմավորում ու ամեն երեկո հրաժեշտ ենք տալիս, իմանալով, որ այն ծագելու է: Մենք հասկանում ենք, որ դա պետք է: Մենք պետք է առաջին հերթին համոզենք ինքներս մեզ, իսկ դա նշանակում է՝ մեր ժողովրդին, որ մենք կարող ենք: Ինչպես դա եղել է ոչ մեկ անգամ: Մոտենում ենք Հորն հովանդանին, գիտենալով, որ մեզ սպասում են դժվարություններ: Բայց գնում ենք հենց այդ ուղիով, որովհետեւ մեզ համար չկա ուրիշը: Ուրեմն պետք է գնալ: Մենք հույսը չենք վերածում միայն ուղեցույցի: Այն մեզ համար պարզապես անգին ուղեկից է: Երբ գլխավերեւումդ ծածանվում է երկրիդ դրոշը, դու չես մտածում հույսի մասին, որը վերջինն է մեռնում, այլ՝ պատասխանատվության զգացումի մասին: Հայրենիքի դրոշի միջով «Արմենիա»-ի տախտակամածին սփռված մայրամուտը մի տեսակ ուժգնացրեց պատասխանատվության այդ մեծ զգացումը: Դա նշանակում է՝ եթե ճանապարհիդ հանդիպում են արգելքներ, պետք է մտածել ոչ թե երազանքի եւ հույսի մասին, այլ նավի ու անձնակազմի ամրության ու պատրաստվածության վիճակի: Ոչ մի առանձին փուլ մեզ համար չի եղել առանձին նոպատակ: Առավելեւս՝ ինքնանոպատակ: Նոպատակը մեկն է. մինչեւ վերջ կատարել դժվարին աշխատանքը Մեսրոպ Մաշտոցի անունը կրող ծովարշավի շրջանակներում: Մենք երջանիկ ենք արդեն նրանով, որ մեզ բաժին ընկավ հենց այդ երթուղին: Եվ երջանիկ ենք նույնիսկ նրանով, որ գույների հենց այդպիսի հիասքանչ ու հեքիաթային համադրություն ունի մեր դրոշը, որի տակ պատմական հաղթանակ ենք տարել եւ փրկել մեր հայրենիքը: Երջանիկ ենք նրանով, որ հիմա Ատլանտյան օվկիանոսում, ոռնացող քառասնական լայնություններում ուղիղ դեպի արեւն է լողում մեր «Արմենիա»-ն: Չէ՞ որ տպավորությունն այնպիսին է, թե հորիզոնի գծից մինչեւ մեր միակայմ առագաստանավի քիթն ընդառաջ է հոսում Ամազոնի պես ահռելի մի գետ՝ արծաթագույն եւ արեւ ճառագայթների բյուր անդրադարձումներով եւ կապարա-արճճային ափերով: Ահա այսպիսի արեւային արահետ ունի այս պահերին մեր «Արմենիա»-ն:

...Մինչեւ Հորն հովանդան հազար մղոնից քիչ ավելի է մնացել: Ես չեմ կարող ճշգրիտ ասել, թե երբ կլինենք այնտեղ: Բայց ասեմ, որ հովանդանից հարյուր մղոն հեռավորության վրա է գտնվում մեր մոլորակի ամենահարավային քաղաքը՝ Ուշուայան:

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
«Արմենիա» առագաստանավ,
Ատլանտյան օվկիանոս

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲԵՌԼԻՆԻՑ

2010-ի հաջողությունները Գերմանիայում՝ հայկական խոշորացույցով

Թեպետ եղանակային անբարենպաստ պայմանները հրավիրյալների մի մասին հետ էր պահել դեկտեմբերի 23-ին Բեռլինում ՀՀ դեսպանության կազմակերպած տոնական հանդիպմանը ներկա գտնվելուց, բայց Նուսսբաումալլե 4 հասցեում հավաքված՝ Գերմանիայի տարբեր ծայրերից ժամանած հյուրերը գինու, շամպայնի զնգացող գավաթների, սառը խորտիկների ու տաք, ամանորյա հյուրընկալության մթնոլորտում առիթ ունեցան համառոտ անդրադառնալու 2010-ի իրենց հաջողություններին:

Դեսպան Արմեն Մարտիրոսյանը, ողջունելով հյուրերին, նշեց, թե հրավիրել են նրանց, ովքեր 2010-ին Գերմանիայում Հայաստանին ի նպաստ լուրջ ներդրում են ունեցել:

Պատվավոր հյուրը «Աղետ. մի ցեղասպանություն» ֆիլմի բեմադրիչ Էրիկ Ֆրիիդլերն էր, ում՝ ապրիլի 9-ին գերմանական ARD-ով ցուցադրած հեղինակային աշխատանքն արժանացավ 2010-ի գերմանական հեռուստատեսության մրցանակին՝ լավագույն վավերագրություն անվանակարգում: (Հիշյալ ֆիլմի մասին ժամանակին առիթ ենք ունեցել իրազեկելու մեր ընթերցողներին-Ան. Հ.): Ֆիլմի հեղինակը պատվաբեր համարեց նման մրցանակը՝ շեշտադրելով, թե սա պատասխան է նաեւ այն թերահավատներին, ովքեր կարծում էին, թե անցյալում տեղի ունեցած իրադարձությունն այլեւս թեմա չէ, չարժե ֆիլմ արտադրել, նման քննարկումներ եղել են գերմանական հեռուստատեսության առաջին ծրագրում: Ուրիշներ էլ համոզված էին, որ սա շատ արդիական բանավեճի նյութ է, եւ չի կարելի խոսել ուրիշ ցեղասպանությունների՝ Ռուանդայի, Դարֆուրի, Կամբոջայի մասին, եթե նյութ չես դարձրել 20-րդ դարի առաջին սիստեմատիկ ցեղասպանությունը: Ցույց տվեցինք, որ սա միայն հայերի խնդիրը չէ, այլ հումանիտար խնդիր, մեր բոլորի խնդիրը՝ պայքարելու ցեղասպանության ուրացման դեմ: Ֆիլմը ցուցադրելու հրավերները շարունակվում են, ասաց Էրիկ Ֆրիիդլերը՝ առաջին հերթին նշելով Փենսիլվանիայի, Հարվարդի, Կոլումբիա համալսարանների պատմության ֆակուլտետներից եկած հետաքրքրության մասին: Ֆիլմը դիտել են մեծ թվով մարդիկ, ընդ որում՝ ոչ հայազգիներ, այն ծնունդ է տվել մեծ քննարկում-բանավեճի: Անդրադառնալով Գերմանիայից դուրս՝ 2010-ի հուլիսին ԱՄՆ-ի Կոնգրեսում ֆիլմի ցուցադրումներին, որ դիտել են 49 կոնգրեսմեն, 5 սենատոր, 400 ակնդիր, Ֆրիիդլերն ամփոփեց՝ ասել է, թե Կոնգրեսն իրազեկ է դրան, նույնիսկ most stupid (թարգմ.՝ ամենաբթամիտ, ամենահիմար-Ան. Հ.) կոնգրեսականը:

Տանտերը՝ դեսպան Մարտիրոսյանը, հաջողություն մաղթելով Էրիկ Ֆրիիդլերի առաջիկա ծրագրերին, հավելեց, թե դեսպանությունը պատրաստակամ կլինի աջակցելու նրա ստեղծագործական ծրագրերին՝ անկախ այն բանից՝ ցեղասպանությանը կանդրադառնա, թե՞ ուրիշ նյութի:

Ֆրիիդլերը հիշատակեց դեկտեմբերի 9-ին մահկանացուն կնքած դոկ., պրոֆ. Հերման Գոլցի դերակատարումը, նրա՝ ընկերոջ, մարդու, խորհրդատուի, պատմաբան գիտնականի տեղը թափուր է մնացել եւ առաջին հերթին՝ նրան ճանաչողների սիրող սրտերում: Բոթը ստացա, երբ Հարվարդի համալսարանում էի, արտասվեցի: Տարին նրա մահով տխուր ավարտ ունեցավ, այդուհանդերձ մեր ընդհանուր աշխատանքի արգասիքը եղավ ֆիլմի մեծ հաջողությունը, որն առանց նրա չէր կարող կայանալ, խոսքը եզրափակեց պատվավոր հյուրը՝ «Աղետ. մի ցեղասպանություն» ֆիլմի հեղինակ Էրիկ Ֆրիիդլերը:

Հրավիրյալների թվում էին Սամսոնիա Անհալթի հայկական համայնքի ատենապետ Հարություն Մանուկյանը, ում եւ ուրիշ համայնքայինների ջանքերի եւ ֆինանսական խնայողությունների շնորհիվ Հալլեում այսօր գործում է Ս. Հարություն հայկական եկեղեցին, Արմենուհի Դրոսս Աբգարյանը, ում նախաձեռնությամբ Հալլեի համալսարանում 2010-ին բացվեց Գերմանիայում առաջին հայագիտական ամբիոնը, Արչի Կալենցը, ում նախաձեռնությամբ հայ արվեստագետների ստեղծագործությունները ներկայացնելու մի կայուն հասցե է ստեղծվել Գերմանիայում, Պարույր Սեւակի «Եղիցի լույս» գրքի թարգմանիչ Միխայել Մինասյանը, որ Բեռլինում երկօրյա հայկական դպրոց է հիմնադրել, Սյուզի Քենտիկյանի հովանավորած «Կյանքի ծառ-Հայաստան» ծրագրի ղեկավար Զինաիդա Ումբանդը, Վազրիկ Բազիլը, որ 2010-ին Գերմանիայի Ճառագիրների միության նախագահի իր պաշտոնը համալրեց նույնքան լուրջ պարտականություններով՝ դառնալով Սամսոնիա նահանգի մշակույթի եւ կրթության նախարարի խորհրդական, Գերմանիայի միջազգային PR մրցության ժյուրիի անդամ, նաեւ ուրիշներ:

Նրանց բոլորի հետ մեր՝ 2010-ի դեկտեմբերի 23-ին կայացած զրույցը «Ազգի» էջերում կներկայացնենք 2011-ի առաջիկա համարներից մեկում:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Բեռլին

ԱԶԳ

Միջազգային

Եթե որեւէ սովորական հունգարացու կամ շվեդի մանավանդ հեռտոնական այս օրերին ասեն, որ «սեւ Աֆրիկան» կարող է երբեմն խաղաղակրթության դասեր տալ «ամենաքաղաքակիրթ» աշխարհամասին, առա նա կամ կծիծաղ, կամ «ցավակցական հայացքով» կնայի հարցում անողին: Սակայն հունգարյան այս օրերին այդ մայրցամաքի ամենամեծ երկրին՝ Սուդանին կարող են նախանձել շատ եվրոպացիներ, օրինակ՝ սերբեր ու ալբանացիներ կամ իսպանացիներ, կաթոլոնացիներ ու բասկեր, էլ չենք ասում՝ «միանգամից եվրոպացի» դարձած մոլդովացիներ, վրացիներ, օսեր ու աբխազներ եւ իհարկե ղարաբաղցի հայեր ու ադրբեջանցիներ: Իսկ Սուդանում, ավելի ճիշտ՝ նրա հարավում, մարդիկ որոշել են անկախ ապրել, իսկ նույն Սուդանի՝ շատ ավելի հզոր՝ թե տնտեսական, թե ռազմական առումով հյուսիսը, նախանձելի խաղաղակրթությամբ որոշել է հնարավորություն տալ հարավի ժողովրդին հանրաքվե անելու:

Արդարության համար նկատենք, որ սուդանյան անկախության հանրաքվեի անցկացումը մինչեւ վերջին օրերը հարցականի տակ էր, քանի որ, ըստ որոշ փորձագետների, հարավի անկախության կողմնակիցները ավելի քիչ էին ընդդիմախոսներից: Պարզ է, որ հյուսիսը՝ հիմնական ընդդիմադիրն է, քանի որ, եթե ի վերջո հարավն անկախանա, ապա հյուսիսում կմնան շուրջ 30 մլն «խաղցած ու ծայրահեղ աղքատ» մարդիկ. Սուդանի հիմնական բնական հարստությունները՝ նավթային կենտրոնները հենց հարավային մասում են: Ընդհանուր առմամբ ամբողջ Սուդանի նավթարդյունաբերության 85 տոկոսը կենտրոնացված է հարավում: Չնայած այս հանգամանքին՝ երկրի նախագահ **Օմար Բաշիրը** նախքան հանրաքվեի անցկացումը հանդես է եկել հայտարարությամբ. «Ես կընդունեմ որեւէ արդյունք»: Ճիշտ է Բաշիրը չի մոռացել ընդգծել, որ եթե հարավն ի վերջո անկախություն ձեռք բերի, ապա պետք է հրաժարվի երկրի՝ նավթով հարուստ Աբեյի շրջանի վերաբերյալ ունեցած նախապայմաններից. «Հակառակ պարագայում պատերազմը կարող է անխուսափելի լինել», շեշտել է Բաշիրը: Ի պատասխան իր՝ գրեթե գործընկերոջ հայտարարության, հարավի առաջնորդ Սիլվա Կիրը ամերիկացի սենատոր Ջոշ Քերիի հետ հանդիպումից հետո, նշել է. «Հարավի ու հյուսիսի խաղաղ համագոյակցությունը այլընտրանք չունի: Հանրաքվեն վերջ չէ, այլ մեծ ճանապարհի սկիզբը, իսկ վերադարձը պատերազմին անհնար է»:

Ինչեւէ՝ Սուդանում մեկնարկել ու ընթացքի մեջ է «երկրի հարավի ժողովրդի իրական ազատագրման գործընթացը», ինչպես նկատել է Հարավաֆրիկյան հանրապետության նախկին նախագահ, Աֆրիկյան խորհրդի՝ Սուդանի հետ բանակցությունների գծով նախագահող Թաբո Մբեկին՝ խոսելով հունվարի 9-ին մեկնարկած ու մեկ շաբաթ ձգվող հանրաքվեի մասին: Ի դեպ հանրաքվեին մասնակցելու համար արդեն իսկ 4 մլն հարավային սուդանցիներ պատրաստակամություն են հայտնել, որոնցից 95 տոկոսը պարում է հենց հարավում, մյուսները՝ արտասահմանում եւ հյուսիսում: ՄԱԿ-ի փախստականների հարցերով հանձնաժողովն էլ հայտարարություն է տարածել, որ անցած մի քանի ամիսների ընթացքում Սուդանի հյուսիսից հարավ են տեղափոխվել 120 հազար մարդիկ: Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ հունվարի կեսերին աֆրիկյան մայրցամաքում կառաջանա նոր պետություն՝ Հարավային Սուդան: Թե որքանով նոր պետության առաջացումը կնպաստի երկրում եւ առհասարակ Աֆրիկայում կայունությանն ու առաջընթացին՝ դեռեւս վաղ է ասել, սակայն այժմ էլ ակնհայտ է, որ Հարավային Սուդանի առաջացումը, որն ի տարբերություն հյուսիսի, քրիստոնյա է, լուրջ խնդիրներ կարող է առաջացնել «Աֆրիկայի գլխավոր պետության»՝ Եգիպտոսի համար: Ներկա դրությամբ Սուդանը արդյունաբերական առումով թույլ զարգացած պետություն է, հետեւաբար այդ երկիրը Աֆրիկայի այս հատվածի արդյունաբերության հենասյուն Նեղոս գետի կարիքը այնքան էլ շատ չունի: Բայց եթե հարավն անկախանա, իսկ վերջինիս վարչական կենտրոն Ջուբայում արդեն իսկ այսօր ներկայացված են շատ՝ առավելապես արեւմտյան ընկերություններ, ապա Նեղոսի «փայատերերը» կշտանան, ինչը, բնականաբար, Եգիպտոսի «ստրով չէ»: Բացի սրանից, հռչակվելով անկախ՝ հարավային՝ քրիստոնյա Սուդանը ամենայն հավանականության ռազմավարական համաձայնագրեր կկնքի՝ քրիստոնյա Եթովպիայի հետ, ինչպես Կահիրեում են ենթադրում, ընդդեմ Եգիպտոսի: Եվ թերեւս ամենակարեւորը՝ հարավի առաջնորդ Սիլվա Կիրը մի քանի անգամ արդեն հայտարարել է, որ անկախության հռչակումից հետո Հարավային Սուդանը մեծ հավանականությամբ մի շարք համաձայնագրեր կնքի նաեւ Իսրայելի հետ, իսկ սա արդեն լուրջ սպառնալիք է ամբողջ արաբական աշխարհի համար: Ավելորդ չենք համարում նշել, որ Եգիպտոսում մինչեւ այժմ էլ շատ գործիչներ մեղադրում են Թել Ավիվին՝ Սուդանի հարավցիներին ընդդեմ մահմեդական հյուսիսի զինելու մեջ: Այս համայնապատկերում, անշուշտ, Կահիրեն կնախընտրեր գործ ունենալ մեկ, ընդհանուր Սուդանի, քան անհանգիստ հյուսիսի ու անկանխատեսելի հարավի հետ: Հետեւաբար պատահական չէ, որ Եգիպտոսը առաջարկել էր ՄԱԿ-ին եւ Վաշինգտոնին՝ մինչեւ 2011-ի ամառը հետաձգել Սուդանի հանրաքվեն, սակայն երբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պատվիրակությունը այցելեց Սուդան, որտեղ կայացվեց, որ աֆրիկյան երկիրը պատրաստ է հանրաքվեի՝ հենց նախօրոք հաստատված ժամկետներում: Ինչպես արդեն վերը նշեցինք՝ Սուդանի հանրաքվեի արդյունքները հայտնի կդառնան մեկ շաբաթից: Հավելենք միայն, որ հանրաքվեի երկու օրերն անցել են առանց լուրջ միջադեպերի:

Մնում է միայն, սպասել, թե ի՞նչ արձագանք կտա միջազգային հանրությունը մեկ պետության տարածքում մեկ այլ պետության առաջացմանը. ամենայն հավանականությամբ՝ դրական, դա հո Ղարաբաղ չէ՞, որին չեն զինել իսրայելցիները, ոչ էլ նավթով է հարուստ, ոչ էլ երբեւէ պատկանել է Ադրբեջանին, սակայն, Սուդանից ուղիղ 20 տարի առաջ՝ 1991-ի դեկտեմբերի 10-ին, նույն միջազգային օրենքների համաձայնությամբ, ժողովրդական հանրաքվեի միջոցով հայտարարեց իր անկախության մասին:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

«Նավթոտվող» ինքնորոշման իրավունք

Իրանում ընկած օդանավի «սեւ արկղը»

Երեկ հայտնաբերվել է հունվարի 9-ին Իրանի հյուսիս-արեւմուտքում ընկած Iran Air ավիաընկերության «Բոինգ-727» օդանավի երկու «սեւ արկղերից» մեկը: Իրանական հեռուստատեսության տվյալները վկայակոչելով՝ Ֆրանսպրեսը հաղորդում է, որ «սեւ արկղը» շուտով ուղարկվելու է վերծանման:

«Բոինգ-727»-ը Թեհրանից թռել էր Արեւմտյան Ատրպատականի նահանգի մայրաքաղաք Ուրմիա: Նախատեսվածից մեկ ժամ ուշ մեկնած օդանավը Ուրմիա էր հասել վատ եղանակի պայմաններում: Օդաչուները չէին կարողացել վայրէջք կատարել եւ որոշել էին վերադառնալ Թեհրան: Որոշ ժամանակ անց օդանավն անհետացել էր ռադարների էկրաններից:

Իրանական ՁԼՄ-ների վերջին տվյալների համաձայն, օդանավում եղել է 105 մարդ, ներառյալ անձնակազմի անդամները: Աղետի հետեւանքով կա 77 զոհ: Տարբեր վնասվածքներ ստացած 26 անձինք հիվանդանոցներում են: Երկու ուղեւորների ճակատագիրն անհայտ է:

Իսլանդիան զայրացած է ԱՄՆ-ի պահանջից

Ռեյկյավիկում ԱՄՆ դեսպան Լուիս Առեագային Իսլանդիայի ԱԳՆ են կանչել այն բանից հետո, երբ ամերիկյան դատարանը Twitter կայքին պարտավորեցրել է բացահայտել իսլանդացի պատգամավոր Բիրգիտա Յոնսդոտիրի անձնական տվյալները: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ Պրես գործակալությունը՝ վկայակոչելով Իսլանդիայի ԱԳՆ ներկայացուցչին: Ամերիկացիների պահանջը պատճառաբանվում է նրանով, որ Յոնսդոտիրը մեկ անգամ համագործակցել է WikiLeaks կայքի հետ:

Ամերիկյան դատարանի պահանջի մասին հայտնի էր դարձել հունվարի 9-ին: Իսլանդիայում այդ պահանջը զայրույթի ալիք է բարձրացրել: «Շատ լուրջ երեւույթ է, երբ օտար պետությունը՝ ԱՄՆ-ը, անձնական տվյալներ է պահանջում Իսլանդիայի քաղաքացու մասին, որը նաեւ պատգամավոր է», հայտարարել է արտգործնախարար Օգմանդուր Յոհանսոնը:

Յոնսդոտիրի խոսքերով, ինքը մտադիր է վիճարկել ամերիկյան դատարանի վճիռը եւ ԱՄՆ-ում արդեն խորհրդակցել է փաստաբանների հետ: Համանման հայտարարություն է արվել WikiLeaks-ի հիմնադիր Ջուլիան Ասանժը, որ ներկայումս տնային կալանքի տակ է Մեծ Բրիտանիայում:

WikiLeaks-ը հայտնի է Իրաքի եւ Աֆղանստանի պատերազմների վերաբերյալ գաղտնի եւ խորհրդապահական տեղեկությունների, ինչպես նաեւ ամերիկացի դիվանագետների նամակների հրապարակումներով: Յոնսդոտիրը օժանդակել է այն տեսահոլովակի հրապարակմանը, որտեղ երեւում է, թե ինչպես Իրաքում ամերիկացի զինվորականները ուղղաթիռից գնդակոծում են խաղաղ քաղաքացիներին, այդ թվում՝ Ռոյթեր գործակալության թղթակցին:

ԱՄՆ իշխանությունները քանիցս քննադատել են WikiLeaks-ի հիմնադրին եւ սպառնացել են նրան մեղադրել լրտեսության մեջ:

Կոնգրեսական Գիֆորդսի ապաքինման համար «կպահանջվեն ամիսներ»

Արիզոնայի նահանգի Տուսոն քաղաքում շաբաթ օրը հանրահավաքում գլխից վիրավորված կոնգրեսական Գաբրիելա Գիֆորդսի ապաքինման համար «կպահանջվեն ամիսներ»: Բժիշկներն առայժմ նրա կյանքի փրկության երաշխիքներ չեն տալիս: Այդ մասին հաղորդում են Տուսոնի հիվանդանոցից, որտեղ վիրահատվել է կոնգրեսականը:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալության տվյալներով, գլխի թափանց հրազենային վերք ստացած 40-ամյա Գիֆորդսի կենսագործունեությունը ներկայումս պահպանվում է արհեստական շնչառության սարքի միջոցով: Ժամանակի մեծ մասը նա անգիտակից վիճակում է (արհեստական կոմա):

Հանցագործը՝ 22-ամյա Ջարեդ Լաուգները թիկունքից մոտեցել էր կոնգրեսականին եւ կրակել կիսաավտոմատ ատրճանակից, ապա անկանոն կրակ բացել, սպանելով 6 եւ վիրավորելով 12 անձանց: Սպանվածների մեջ են դաշնային դատավորը, Գիֆորդսի 3 օգնականները եւ 9-ամյա մի աղջնակ:

Ջարեդ Լաուգները պաշտոնապես մեղադրվում է 6 անձանց սպանության եւ կոնգրեսականի դեմ մահափորձի համար: Քննիչները փորձում են պարզել, թե նա անդամակցո՞ւմ է արդյոք որեւէ ռազմականացված արմատական խմբավորման: Հայտնի է, որ 2008-ի դեկտեմբերին նա փորձել է ծառայության անցնել ԱՄՆ զինված ուժերում, բայց մերժում է ստացել:

Կոնգրեսական Գիֆորդսը 2010-ի նոյեմբերի 2-ի միջակա ընտրություններում 3-րդ անգամ անընդմեջ ընտրվել է Ներկայացուցիչների պալատի անդամ: Նա մեծ ուշադրություն էր դարձնում ներգաղթի համակարգի բարեփոխմանը, հետազոտական նպատակներով բնաբջիջների օգտագործմանը, էներգիայի այլընտրական աղբյուրներին: Ամուսնացած է NASA-ի աստղագնաց Մարկ Քելլիի հետ: Newsru.co.il կայքի տվյալներով, Գիֆորդսը հրեական ծագում ունի:

Իրանը կգնի 26 մլրդ դոլարի ամերիկյան զենք

Իրանի իշխանությունները մտադիր են ձեռք բերել 26 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ ամերիկյան զինատեսակներ: Տեղական «Ալ Իթթիհադ» թերթին տված հարցազրույցում այդ թիվն է նշել Մուհամմեդ ալ Ասկարին:

Նրա խոսքերով, ԱՄՆ-ի հետ արդեն կնքված պայմանագրի գումարն անցնում է 13 մլրդ դոլարից: Մինչեւ 2013 թ. այդ փողերով ձեռք կբերվեն ռազմօդանավեր եւ ուղղաթիռներ, տանկեր եւ այլ զրահատեխնիկա, ռազմանավեր եւ հրթիռներ: 2013-ից հետո նույնքան գումար կպահանջվի հավելյալ սպառազինությունների գնման համար, ասել է ալ Ասկարին:

ՌԻԱ գործակալությունը նշում է, որ ԱՄՆ-ը աշխարհում առաջին տեղում է զենքի արտահանության գծով: Ստոկհոլմում գործող Խաղաղության խնդիրների հետազոտման միջազգային ինստիտուտի (SIPRI) գնահատմամբ, 2009-ին զենքի համաշխարհային շուկայում ԱՄՆ-ի բաժինը կազմել է 30 տոկոս: Անցյալ տարի ամերիկացիներն Իրանին մատակարարել են մասնավորապես F-16 Fighting Falcon կործանիչներ:

Այսքանից հետո ո՞վ է կասկածում իրանյան պատերազմի իրական նպատակների մասին:

Հվ. Կորեան հրաժարվեց բանակցել ԿԺԴՀ-ի հետ

Հարավային Կորեայի իշխանությունները պաշտոնապես հրաժարվում են բանակցել ԿԺԴՀ ղեկավարության հետ: Բանակցություն սկսելու ԿԺԴՀ-ի կոչը Սեուլում չեն համարում «երկխոսության անկեղծ առաջարկություն»:

Սեուլը համաձայն է բանակցություն սկսել լոկ այն ժամանակ, երբ Փենյանը կանի զինաթափմանն ուղղված քայլեր: Խոսքն առաջին հերթին միջուկային զենքից ազատվելու մասին է:

Փենյանը առանց նախապայմանի բանակցելու առաջարկությամբ հանդես էր եկել հունվարի 8-ին, նշում է Ֆրանսպրես գործակալությունը:

Երկու Կորեաների հարաբերությունները շատ լարված են Յոնփենդո կղզու միջադեպից (23.11.2010) ի վեր, երբ հյուսիսկորեական հրետանու արկերից զոհվեց 4 մարդ:

Ազնիվ, զգայուն, մեծանուն

Հայ մեծանուն երաժիշտ, մաեստրո Օհան Դուրյանի մահը ցնցեց ողջ երաժշտական աշխարհը: Վկան՝ այն հեռագրերն ու ցավակցական նամակներն են, որ ստացվել են տարբեր երկրների երաժշտական կոլեկտիվներից ու աշխարհահռչակ երաժիշտներից: Հունվարի 9-ին սիրված մաեստրոյի հոգեհանգստի կարգը կայացավ Կոնդ թաղամասում գտնվող Սուրբ Հովհաննես եկեղեցում: Հոգեւոր շարականները հնչեցնում էին մաեստրո Օհան Դուրյանի հետ տարբեր տարիներ աշխատած երաժիշտներ, երգիչներ: Մոտ 4 ժամ մարդկանց հոսքը չէր դադարում: Եկեղեցու ողջ տարածքում մարդիկ հիացական հիշողություններով էին ներկայացնում մեծ երաժշտին ու ցավում նրա կորստի համար:

Մաեստրոյին հրաժեշտ տալու էին եկել ՀՀ-ում տարբեր դեսպանատների ներկայացուցիչներ, հյուրեր: Վերջին հրաժեշտին ներկա էր նաեւ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ իր թիմակիցներով: Հունվարի 10-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի մոտ բազմահազար ժողովուրդ էր հավաքվել: Ու երբ մաեստրո Օհան Դուրյանի դիակարգը մոտեցավ, բոլորը սկսեցին ծափահարել:

Այնուհետեւ մաեստրոյին վերջին հրաժեշտ տվողները լուռ դիտում էին խոշոր էկրանի վրա ցուցադրվող մաեստրոյի ղեկավարությամբ համերգային կատարումներ: Կեսօրին ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը (մաեստրոյի թաղման կառավարական հանձնաժողովի նախագահ), փոխնախարարները եւ փոխքաղաքապետ Կամո Արեյանը պատվո պահակ կանգնեցին ու վերջին հրաժեշտը տվեցին ականավոր երաժշտին: Կոմպոզիտորին, մաեստրոյին, մեծ երաժշտին վերջին հրաժեշտ տվեցին ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, Լեւոն Տեր-Պետրոսյանը, մասվորականներ, արվեստագետներ, երաժիշտներ ու երկրպագուներ:

Հոգեւոր դասի հրաժեշտի կարգից հետո ծափահարությունների ուղեկցությամբ Օհան Դուրյանի դին դուրս բերվեց օպերայից, ու թաղման թափորը ուղեւորվեց Կոմիտասի անվան այգի, ուր հանգչում են մեր մեծերը: Նրանց թիվն ավելացավ եւս մեկով:

Մ. ՄԱԿԱԲՅԱՆ

Օհան Դուրյանի հիշատակին

Հայոց երաժշտարվեստի երկնակամարից հեռացավ մի լուսավոր աստղ... հեռացավ դեռ անմահություն, դեռ երկնային երանություն... հայ կատարողական արվեստի պատմության մեջ թողնելով իր անունն ու գործը...

Մեծանուն արվեստագետ Օհան Դուրյանը ծնվել է 1922 թ. սեպտեմբերի 8-ին Երուսաղեմում ու այստեղ էլ ավարտել կոնսերվատորիան: Այնուհետեւ Ցյուրիխում ու Փարիզում դիրիժորական արվեստի դասեր է վերցրել տեղի ճանաչված մասնագետներից: Գրեթե հինգ տարի ղեկավարելով ֆրանսիական մի շարք նվագախմբեր՝ Դուրյանը 35 տարեկան հասակում եկել է Հայաստան՝ իր երազների երկիրը, կարճ ժամանակահատվածում արժանացել ճանաչման: Տարբեր տարիներ ղեկավարել է Հայաստանի ֆիլհարմոնիկ, հեռուստառադիոռեպերտուարային սիմֆոնիկ նվագախմբերը, օպերային թատրոնի երաժշտախումբը:

Մեր օպերային թատրոնի տարեգրության էջերում հիշատակելի են ու արժանվայելու կհիշվեն Օհան Դուրյանի «Անուշ»-ն ու «Պողիկատու»-ը:

Սիմֆոնիկ, օպերային արվեստի հայ երկրպագուները մշտապես կհիշեն նաեւ սիմֆոնիաների դուրյանական մեկնությունները, հատկապես հայ հեղինակների գործերի կատարումները, որոնք մշտապես նրա ուշադրության կենտրոնում էին: Հայաստանի ռադիոյի Ոսկե ֆոնդում պահպանվել են բազում ձայնագրություններ Օհան Դուրյանի մեկնաբանությամբ, իսկ հեռուստատեսության ֆոնդերում իրենց պատվավոր տեղն ունեն Մոցարտի «Ռեքվիեմ»-ի, Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայի, Էդվարդ Միրզոյանի, Ղազարոս Սարյանի, Ջիվան Տեր-Թադեւոսյանի, Ալեքսանդր Աշեմյանի եւ այլ հեղինակների ստեղծագործությունների դուրյանական ընթերցումները:

Դուրյան անունը լայնորեն ծանոթ է նաեւ Եվրոպայում ու Ամերիկայում: Նա ելույթներ է ունեցել աշխարհի շուրջ 100 քաղաքներում: Սիմֆոնիկ երկերին զուգահեռ տարբեր օպերային բեմերում ղեկավարել է շուրջ 30 օպերային գործեր:

1962-69 թթ. Օհան Դուրյանը հայաստանյան գործունեությունը համատեղել է Լայպցիգի նշանավոր «Գեւանդհաուս» ֆիլհարմոնիկ նվագախմբի, ինչպես նաեւ օպերային թատրոնի դիրիժորի պարտականությունների հետ: Այդ տարիներին Դուրյանը համերգային աշխույժ գործունեություն է ծավալել Ավստրիայի ու Գերմանիայի մի շարք երաժշտական կենտրոններում, արժանանալով մամուլի ու մասնագետների բարձր գնահատականին: Բեռլինյան մի շարք թերթ դիրիժորին անվանել են «լիցքավորող դիրիժոր», «հիպնոսող ուժի տեր...», «խոսող ձեռքեր, որոնք համոզում եւ ապշեցնում են ունկնդրին...», «Արեւելյան Եվրոպայի Տոսկանինի...» ու բազում այլ նման գնահատականներ:

Իր Հայաստան Երկիրը սիրող մեծ երաժիշտ էր Օհան Դուրյանը: Աշխարհի ճամփաներով անցած դիրիժորի խռովահույզ հոգին հանգրվանեց իր հայրենի հողում:

Ամենամեծ գնահատականը

Հիմա հայաստանյան որոշ արվեստախառն պետական այրեր կսկսեն ցավակցություն եւ ափսոսանք հայտնել, իսկ գուցե եւ լան, մազեր փետտեն, թաքինակներ քամեն (աման-աման) տեսակ-տեսակ ճառերով պատմեն Դուրյանի մեծության, անգամ իրենց փայլուն հարաբերությունների մասին Մեծն Մաեստրոի հետ:

Ո՞ւր ես, Շիրազ. նորից ասա՝ «Գնա մեռի, արի սիրեմ»...

Բայց այդ մարդկանցից եւ ոչ մեկը իր վրա չի վերցնելու մեղքի այն բաժինը, որի պատճառով Մեծ հայը լքեց իր Հայրենիքը եւ մեկնեց Մոսկվա՝ կրթելու այլոց, այն դեպքում, երբ կարող էր դիրիժորության վարպետության մի ամբողջ փունջ դասեր պարգեւել արվեստի մեջ դեռ երեկվա, իսկ այսօր արդեն բիրդան աղա դարձած, հետն էլ Արվեստի վաստակավոր գործիչ անվանումը առած, գնած, գողացած, շրջապատի հաշվին յուրացրած, բայց ոչ ձեռք բերված կոչումը: Ու կհանդիպի Մաեստրոն նրանց, վերեւում, ու կթքի նրանց երեսներին, եւ իհարկե նրանք էլ կասեն, վայ, տես, անձրեւ է գալիս...

1992 թվի ցուրտ ձմեռն էր: Օպերային թատրոնի դահլիճը լեփ լեցուն էր ԻՍԿԱԿԱՆ արվեստագետներով եւ արվեստասերներով: Պատճառը՝ Օհան Դուրյանը կատարում էր Բեթհովենի թիվ 9 անմահ սիմֆոնիան: Ցուրտ էր, շատ ցուրտ, բայց ոչ ոք դահլիճը չլքեց: Հերոսներ էին նաեւ կատարող երաժիշտները երգչախմբով հանդերձ: Համերգի հիանալի ավարտից հետո ինձ մոտեցավ Ռադիոյի երաժշտական խմբագրության մեկնաբանը (Վալիկը) համերգի առթիվ տպավորության հարցազրույցի խնդրանքով: Եվ ահա թե ինչ ասացի,- Ես չէ, որ պիտի գնահատեմ Օհան Դուրյանի արվեստը, ամենամեծ գնահատականը այս ցուրտ, չտաքացվող դահլիճի լեփ լեցուն լինելն է...

ՆՈՒՔԱՐ ԱՍԼԱՆՅԱՆ
Հայֆա, Իսրայել

Վշտակցում է Ֆրանսիան

Ֆրանսիայի դեսպանությունը եւ ֆրանսիական համայնքը Հայաստանում հուզմունքով եւ վշտով ընդունեցին Մաեստրո Օհան Դուրյանի մահվան լուրը եւ խոնարհվում են մեծ երաժշտի եւ դիրիժորի հիշատակի առաջ:

Դեսպանությունը եւ ֆրանսիական համայնքը հարգանքի տուրք են մատուցում մշակույթի մշակին, խաղաղության եւ սահմաններ չճանաչող երկխոսության մարդուն:

1882-ից Ֆրանսիայի հպատակ Օհան Դուրյանն իր տաղանդի միջոցով շուրջ 80 տարի ծառայել է երաժշտությանը՝ լինի դա Երուսաղեմում ուր ծնվել եւ կրթություն է ստացել, Ֆրանսիայում ուր կրթությունը շարունակել է հայտնի երաժիշտների մոտ, Հայաստանում, ուր մեծապես օժանդակել է ներկայացնելով հայ երաժիշտներին եւ երգահաններին, կամ ղեկավարելով աշխարհահռչակ նվագախմբեր:

Խորը տխրության այս պահին Ֆրանսիայի դեսպանությունը վշտակցում եւ ցավակցում է նրա ընտանիքին:

Տաթեւիկ Ղափլանյան

2010 թվականի դեկտեմբերի 22-ին Լոս Անջելեսում կյանքից հեռացավ ճանաչված դերասանուհի, ՀՀ վաստակավոր արտիստ Տաթեւիկ Ղափլանյանը: Երկար տարիներ աշխատելով Երեւանի Դրամատիկական թատրոնում, Տաթեւիկը հանդես եկավ հիշարժան դերախաղերով, որոնք նրան սիրելի դարձրին լայն հանդիսատեսին. Աղջիկ («Հալածված առավոտը» պիեսում), Ժաննա («Արտույտը»), Վալյա («Իրկուտսկյան պատմություն»), Կատյա («Ռեպետիտոր»), Երանյակ («Ատամնաբույժն արեւելյան»), Մարի («Վերջին ուսուցիչը»), Օֆելյա («Համլետ»), Վայրի Աղջիկը՝ ժան Անույի համանուն պիեսի հեռուստատեսային բեմադրության մեջ եւ այլն:

Վերջին տարիներս Տաթեւիկ Ղափլանյանը ապրում էր Լոս Անջելեսում, որտեղ էլ անժամանակ ընդհատվեց նրա կյանքը:

Տաթեւիկ Ղափլանյանի հոգեհանգիստն ու հուղարկավորությունը տեղի կունենա սույն թվականի հունվարի 11-ին ժամը 14-ին Երեւանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնից:

Հասցեն՝ Իսահակյան 28:

Կյանքից հեռացավ անվանի մասվորական Անահիտ Բայանդուրը

Անահիտ Սերգեյի Բայանդուրը ծնվել ու մեծացել է արվեստագետների ու մասվորականների ընտանիքում: Անվանի բանաստեղծուհի Մարո Մարգարյանի եւ «Արվեստ» ամսագրի գլխ. խմբագիր Սերգեյ Բայանդուրի դուստրը, իր ծնողներից ժառանգել է հայրենիքի նկատմամբ սերն ու հոգածությունը: Անահիտ Բայանդուրը 1962-ին ավարտել է Մոսկվայի Գորկու անվան գրականության ինստիտուտը եւ հենց այդ տարիներին սկսել է զբաղվել թարգմանություններով, հայ արձակով: Նա էր Հրանտ Մաթեւոսյանի «Մենք ենք, մեր սարերը» ժողովածուն ռուսերեն թարգմանել, որով էլ սկիզբ է առել գրողի եւ թարգմանչուհու արգասավոր համագործակցությունը: Բայանդուրը թարգմանել է Հ. Մաթեւոսյանի գրեթե բոլոր ստեղծագործություններն ու տպագրել դրանք: Հովհաննես Թումանյանից մինչեւ Աղասի Այվազյան՝ Անահիտ Բայանդուրի հայ արձակից արված երկերի ընտրության չափորոշիչը միշտ որակն է եղել, որոնք էլ թարգմանաբար հրամցրել է ռուսալեզու ընթերցողին:

1990-ին Անահիտ Բայանդուրն ընտրվել է Հայաստանի առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր եւ եղել է ՌԴ Դումայում Հայաստանի խորհրդարանի ներկայացուցիչը: Նա ակտիվ մասնակից էր (1988-ից) Ղարաբաղյան շարժմանը: Բայանդուրն առաջին հասարակական կազմակերպության՝ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայկական կոմիտե» ստեղծողն էր մեր երկրում, եւ այդ կառույցը սկզբնական շրջանում բացառիկ դերակատարություն ունեցավ Հայաստանի հասարակության կյանքում: Բազմաթիվ ու բազմաբնույթ են Անահիտ Բայանդուրի ծավալած լայն գործունեությունները, որոնք էլ միջազգային հանրությունը բարձր է գնահատել, ու նրան շնորհել է աշխարհում ամենահեղինակավոր պարգեւներից մեկը՝ Օլաֆ Պալմեյի անվ. միջազգային ֆոնդի «Համագործակցության հանուն խաղաղության» մրցանակը: Վերջին տարիներին Բայանդուրը հիմնեց «Դեմոկրատիայի դպրոց» բանավեճի ակումբը, որտեղ քննարկվում էին երկրի առավել հրատապ խնդիրներն ու մարտահրավերները թե՛ քաղաքական գործիչների եւ թե՛ երիտասարդների հետ: Միշտ լինելով ընդդիմադիր ճամբարում, Անահիտ Բայանդուրը ոչ մի րոպե չի դադարել սկզբունքների հարցում լինել կրքոտ եւ անզիջում, մարդկային հարաբերություններում հոգատար եւ զգայուն: Նա մինչեւ կյանքի վերջին րոպեն ծրագրում էր նոր նախաձեռնություններ՝ պատիպանելով մասվորականի արժանապատիվ կեցվածքը:

Երեկ երեկոյան անվանի մասվորականի հոգեհանգստի կարգը կայացավ Կոնդի Սուրբ Հովհաննես եկեղեցում: Իսկ այսօր այդ նույն վայրում Անահիտ Բայանդուրի վերջին հրաժեշտը եւ հուղարկավորությունը կկատարվի ժամը 11.00-14.00-ն:

Մ. Մ.

Ցավակցություն

Հայաստանի առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր **Անահիտ Բայանդուրի** մահվան կապակցությամբ «Գերագույն խորհուրդ» ակումբի նախագահությունը խորապես վշտակցում է նրա հարազատներին ու մերձավորներին:

Հայտարարություն

Ուկրաինայի հայերի «Հայկական տուն» հասարակական կազմակերպությունը հայտարարություն է ընդունել՝ ի պատշտպանություն Մոսկվայում նկարահանվող «Ընդհատված երգը» գեղարվեստական կինոնկարի, որի սյուժեի կենտրոնում խորը հորի մեջ հայտնված հայի եւ ադրբեջանցու երկխոսությունն է: Հայտարարության մեջ կարեւորվում է հայ-ադրբեջանական խնդրի ակունքները ֆիլմի միջոցով միջազգային հանրությանը ճիշտ ներկայացնելու անհրաժեշտությունը:

«Պատկերացնելու համար, թե Ադրբեջանում ինչ իրարանցում է առաջացրել «Ընդհատված երգը» ֆիլմի ստեղծման մասին տեղեկատվությունը, բավական է այցելել ադրբեջանական ռուսալեզու լրատվական կայքերից մեկնումեկը: Ադրբեջանական քարոզչությունն ամեն գնով փորձում է արատավորել ֆիլմի հեղինակությունը: Հաշվի առնելով այս իրողությունը, մենք կոչ ենք անում Ուկրաինայի հայ համայնքի ներկայացուցիչներին բոլոր հնարավոր միջոցներով աջակցել կինոնկարի ստեղծմանը: Աշխարհը պետք է իմանա ճշմարտությունը»,- ասվում է հայտարարության մեջ:

Ուկրաինայի հայերի «Հայկական տուն» ՀԿ
Արմեն Պապիկյան, նախագահ

Էլ. հասցե՝ haykakantun@gmail.com
Հեռախոս՝ (+38044) 285-19-00

Լեւոն Արոնյանը աշխարհում կրկին 3-րդն է

Սերգեյ Մովսիսյանը ներկայացնում է Հայաստանը

Ավանդույթի համաձայն ՖԻԴԵ-ն հրապարակել է շախմատիստների դասակարգման հերթական ցուցակը հունվարի 1-ի դրությամբ: Լեւոն Արոնյանը, որ նոյեմբերին առաջին անգամ հասել էր 2800-ի սահմանագիծը, վարկանիշն ավելացրել է 4-ով եւ 2805 գործակցով պահպանել է տեղը լավագույն եռյակում՝ իրենից առաջ թողնելով միայն նորվեգացի Մագնուս Կառլսենին (2814) եւ հնդիկ շախմատիստ Վիշվանաթան Անանդին (2810):

Ամանորի շեմին ուրախալի լուր ստացվեց: Հայազգի գրոսմայստեր Սերգեյ Մովսիսյանը հունվարի 1-ից ներկայացնում է Հայաստանը եւ այսուհետ հանդես կգա մեր ազգային հավաքականում: Դասակարգման նոր ցուցակում նախկինում Սլովակիան ներկայացնող Մովսիսյանը 2721 վարկանիշով 26-րդ տեղում է: Նախորդ ցուցակի համեմատ նա պահպանել է վարկանիշը, սակայն 2 հորիզոնականով նահանջել է: Մովսիսյանն Ամանորը դիմավորեց իտալական Ռեջիո Էմիլիա քաղաքում, որտեղ մասնակցում էր շախմատի միջազգային մրցաշարին: Հետաքրքրական է, որ նա մրցաշարի սկզբում խաղում էր Սլովակիայի դրոշի ներքո, իսկ հունվարի 1-ից հետո, երբ ՖԻԴԵ-ն պաշտոնապես հաստատեց Մովսիսյանի տեղափոխությունը, նրա խաղասեղանին հայտնվեց հայկական եռագույնը: 10 մասնակիցների մասնակցությամբ անցկացված մրցաշարում Մովսիսյանը 9 հնարավորից վաստակեց 5 միավոր եւ Վասիլի Իվանչուկի ու Դավիթ Նավարայի հետ բաժանեց 3-5-րդ տեղերը: Մովսիսյանը մրցաշարում անպարտելի մնաց: Նա հաղթեց Նայջել Շորթին, իսկ Ալեքսանդր Մորոզեւիչի, Ֆաբիանո Կարուանայի, Ֆրանցիսկո Վայլեխոյի, Ալեքսանդր Օնիշչուկի, Միխայիլ Գոդենայի, Վասիլի Իվանչուկի, Դավիթ Նավարայի եւ Վուղար Հաշիմովի հետ պարտիաներն ավարտեց ոչ-ոքի:

100 ուժեղագույնների ցանկում Հայաստանի 3-րդ ներկայացուցիչը Վլադիմիր Հակոբյանն է: Նա պահպանել է վարկանիշը (2675) եւ 2 հորիզոնականով բարձրանալով, զբաղեցնում է 63-րդ տեղը: Գաբրիել Սարգսյանի վարկանիշը (2667) եւս անփոփոխ է մնացել, սակայն նա մեկ հորիզոնականով առաջադիմել է եւ այժմ 75-րդն է: Ֆրանսահայ Տիգրան Ղարամյանը 2658 վարկանիշով 94-րդ տեղից տեղափոխվել է 88-րդ հորիզոնական: Նա վարկանիշն ավելացրել է 8-ով:

Կանանց դասակարգման ցուցակում հայ շախմատիստուհիներից ամենաբարձրը Լիլիթ Մկրտչյանի վարկանիշն է (2475), որով նա զբաղեցնում է 26-րդ տեղը: Լիլիթը 4-ով նվազեցրել է վարկանիշը, նույնքան հորիզոնականով էլ նահանջել է: Ցուցանիշը վատթարացրել է նաեւ Էլինա Դանիելյանը: Նա վարկանիշը (2454) նվազեցրել է 12-ով եւ 31-րդ տեղից նահանջել է 38-րդ հորիզոնական: 100 ուժեղագույնների թվում է նաեւ Լիլիթ Գալոյանը (2385), որը թեեւ պահպանել է վարկանիշը, սակայն 76-րդ տեղից նահանջել է 81-րդ հորիզոնական:

Անսասան են կանանց դասակարգման ցուցակի առաջատար Հուդիթ Պոլգարի (2686) դիրքերը: 2-րդ տեղը 2607 վարկանիշով զբաղեցնում է Համոի Կոներուն, 3-րդ տեղում աշխարհի նորընծա չեմպիոնուհի, չինացի Հոու Յիֆանն է (2602):

Մինչեւ 20 տարեկան պատանի շախմատիստների լավագույն խմբակում տեղ է զբաղեցրել վանաձորցի 17-ամյա գրոսմայստեր Սամվել Տեր-Սահակյանը: Նա 2560 վարկանիշով 18-րդ տեղում է:

ՖԻԴԵ-ն դասակարգում է նաեւ իր կազմում ընդգրկված երկրները: Հիշեցնենք, որ երկրի միջին վարկանիշը հաշվվում է այդ երկրի 10 ուժեղագույն շախմատիստների անհատական վարկանիշներից: Շնորհիվ Սերգեյ Մովսիսյանի, Հայաստանի միջին վարկանիշը զգալիորեն աճել է եւ հասել 2649-ի: Այս ցուցանիշով Հայաստանը նախորդ ցուցակի 10-րդ հորիզոնականից տեղափոխվել է 4-րդ տեղ: Ցուցակը նախկինի պես գլխավորում է Ռուսաստանը (2734), որին հաջորդում են Ուկրաինան (2694) եւ Ֆրանսիան (2654): Լավագույն տասնյակում են նաեւ Հնդկաստանը (2641), ԱՄՆ-ը (2640), Իսրայելը (2637), Ադրբեջանը (2635), Հունգարիան (2634) եւ Հոլանդիան (2634):

Ինչպես տեսնում ենք, Սերգեյ Մովսիսյանի տեղափոխությունն արդեն դրականորեն է ազդել Հայաստանի շախմատային վարկանիշի վրա: Հուսանք, որ Հայաստանի հավաքականի կազմում էլ նա իրեն լավագույնս կդրսեւորի՝ նպաստելով մեր թիմի հաջող մրցելույթներին: Նշենք, որ առաջին ելույթը սպասվում է հուլիսին Չինաստանում կայանալիք աշխարհի թիմային առաջնությունում:

Զեկոն բոսնիացի ամենաթանկ ֆուտբոլիստն է

Անգլիական «Մանչեսթր Սիթին» մոտ 32 մլն եվրոյով գերմանական «Վոլֆսբուրգից» գնել է բոսնիացի հարձակվող Էդին Զեկոյին: Նա դարձավ բոսնիական ֆուտբոլի պատմության մեջ ամենաթանկ ֆուտբոլիստը: Զեկոն անգլիական ակումբի հետ 4,5 տարվա պայմանագիր է կնքել:

Զեկոն «Վոլֆսբուրգում» 3,5 մրցաշրջան անցկացրեց՝ այդ ընթացքում մասնակցելով 111 խաղի, խփելով 66 գնդակ: Նա 2009-ին թիմի կազմում դարձել է Գերմանիայի չեմպիոն:

«Մանչեսթր Սիթին» պայքարում է Անգլիայի չեմպիոնի տիտղոսի համար եւ դա իմ ուրտով է: Ինձ ոգեւորում է այն փաստը, որ հնարավորություն կստանամ միեւնույն թիմում խաղալու Կառլոս Տեւեսի եւ Կոլո Տուրեի հետ, որոնց տեսել եմ միայն հեռուստացույցով: Իսկ Ժերոմ Բոատենգի եւ Վենսան Կոմպանիի հետ բախտ է վիճակվել հանդիպել խաղադաշտում: Նրանք կօգնեն ինձ հասնել նպատակիս եւ կատարելագործել վարպետությունս: Ցանկանում եմ ցույց տալ ֆուտբոլասերներին, թե ինչու անգլիական ակումբն ինձ համար խոշոր գումար է վճարել: Բոլորն ինձանից գոլեր են սպասում, սակայն առաջին հերթին ցանկանում եմ իմ ներդրումն ունենալ թիմի հաջողությունում: Խոսել եմ Ռոբերտո Մանչինիի հետ, որի կարծիքով ես օպտիմալ ակումբ եմ ընտրել», նշել է Էդին Զեկոն:

Զեկոն ֆուտբոլային կարիերան սկսել է 17 տարեկանում «Ժելեզնիչարում»: 2 տարի անց նա տեղափոխվեց չեխական «Տեպլիցա»: Զեկոն իրեն դրսեւորեց 2006/07-ի մրցաշրջանում՝ 13 գնդակով դառնալով Չեխիայի լավագույն ռմբարկու եւ առաջնության լավագույն լեգեոնական: Եվ առաջարկն իրեն սպասեցնել չտվեց: 4 մլն եվրոյի դիմաց «Տեպլիցան» համաձայնեց Զեկոյին տրամադրել «Վոլֆսբուրգին»:

Նոր թիմում Բոսնիայի հավաքականի առաջատարն առաջին իսկ օրից իրեն լավագույն ձեւով դրսեւորեց: Նա նպաստեց թիմի չեմպիոնությանը, իսկ 2009/10-ին 22 գնդակով դարձավ առաջնության լավագույն ռմբարկու: «Վոլֆսբուրգում» խփած 66 գնդակով Զեկոն թիմի բոլոր տարիների ամենաարդյունավետ ֆուտբոլիստն է: 2009-ին եւ 2010-ին Զեկոն ճանաչվել է Բոսնիայի լավագույն ֆուտբոլիստ:

Ֆեդերերը մրցաշրջանը սկսեց հաղթանակով

Շվեյցարացի թենիսիստ Ռոջեր Ֆեդերերը հաջող սկսեց նոր մրցաշրջանը՝ հաղթող ճանաչվելով Դոհայում անցկացված մրցաշարում: Եզրափակիչում Ֆեդերերը 6-3, 6-4 հաշվով պարտության մատնեց ռուսաստանցի Նիկոլայ Դավիդենկոյին: Վերջինս կիսաեզրափակիչում պայքարից դուրս էր մղել իսպանացի Ռաֆայել Նադալին: Նշենք, որ անցյալ տարի Դոհայում հենց Դավիդենկոն էր դարձել հաղթող՝ պարտության մատնելով Ֆեդերերին ու Նադալին: Մինչեւ Դոհայի հանդիպումը Դավիդենկոն Ֆեդերերին զիջել էր նաեւ Մելբուռնում եւ Ցինցինատիում: Ֆեդերերը 3-րդ անգամ ուժեղագույնը ճանաչվեց Դոհայում: Նախկինում նրան Քաթարի մայրաքաղաքում հաջողությունն ուղեկցել էր 2005 եւ 2006-ին:

ԲՈՆՅՔՍՄԱՐՏ

Դարչինյանը ռինգ դուրս կգա ապրիլի 23-ին

Թեթեւագույնքաշային կարգի 4 ուժեղագույն բոնցֆամարտիկների մրցաշարի շրջանակներում Վախթանգ Դարչինյանն իր 2-րդ մենամարտը կանցկացնի ապրիլի 23-ին Լոս Անջելեսում: Այդ օրը 3-րդ տեղի համար մրցապայքարում նա կմենամարտի կոլումբիացի Յոնի Պերեսի հետ: Նույն երեկոյի ընթացքում ռինգ դուրս կգան թեթեւագույնքաշային կարգում IBF-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Ժոզեֆ Ագբեկոն եւ Աբներ Մարեսը, որոնք կվիճարկեն մրցաշարի հաղթողի կոչումը:

Հիշեցնենք, որ մրցաշարի կիսաեզրափակիչում Վախթանգ Դարչինյանը դեկտեմբերի 11-ին ԱՄՆ-ում կայացած մենամարտում միավորներով զիջել էր մեքսիկացի Աբներ Մարեսին: Նույն օրը Յոնի Պերեսը պարտվել էր Ժոզեֆ Ագբեկոյին:

Յոնի Պերեսը 31 տարեկան է: Պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 22 մենամարտերից 20-ում նա հաղթել է, մեկական անգամ հանդիպումն ավարտել է ոչ-ոքի եւ պարտվել է: Հունվարի 7-ին 35-ամյակը նշած Վախթանգ Դարչինյանը պրոֆեսիոնալ ռինգում 39 մենամարտ է անցկացրել: Դրանցից 35-ում նա հաղթել է, 3-ում պարտվել է, մեկն ավարտել է ոչ-ոքի:

Նշենք, որ Վախթանգ Դարչինյանն անցած տարվա արդյունքներով էլ կրկին ընդգրկվել է աշխարհի ուժեղագույն 100 պրոֆեսիոնալ բոնցֆամարտիկների ցանկը, որը կազմում է ամերիկյան «Ռինգ» ամսագիրը: Դարչինյանն այդ ցուցակում 47-րդ տեղում է: Նախորդ ցուցակի համեմատ Դարչինյանը 6 հորիզոնականով բարելավել է ցուցանիշը: 100 լավագույնների թվում է նաեւ Արթուր Աբրահամը, որը 66-րդն է: Արթուրը վարկանիշային ցուցակում զգալիորեն նահանջել է: Նախորդ ցուցակում նա զբաղեցնում էր 13-րդ հորիզոնականը:

Ինչպես եւ նախորդ անգամ, նոր ցուցակն էլ գլխավորում է Մենի Պակյաոն: 2-րդ տեղը պահպանել է քաշային հինգ կարգերում աշխարհի նախկին չեմպիոն Ֆլոյդ Մեյվեզերը: Մեծ առաջընթաց է ունեցել միջինքաշային կարգում WBC/The Ring-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Սերխիո Մարտինեսը, որը 71-րդ տեղից տեղափոխվել է 3-րդ հորիզոնական: Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Խուան Մանուել Մարկեսը, Նոնիտո Դոնեռը, Պոնգսակլեկ Վոնջոնգկամը, Ֆեռնանդո Մոնտիելը, Վլադիմիր Կլիչկոն, Տիմոտի Բրեդլին եւ Խուան Մանուել Լոպեսը:

Հայաստանից՝ Լեւոն Բաբուջյանը

Հնդկաստանի մայրաքաղաք Նյու Դելիում մեկնարկած շախմատի միջազգային մրցաշարում Հայաստանը ներկայացնում է գրոսմայստեր Լեւոն Բաբուջյանը: 3 տուրից հետո նա 2 միավորով մրցաշարի 407 մասնակիցների մեջ զբաղեցնում է 89-րդ տեղը: Լեւոնը հաղթանակով մեկնարկեց՝ պարտության մատնելով հնդիկ Կրիշնային: 2-րդ տուրում նա պարտվեց մրցաշարի մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշ (2671) ունեցող ուկրաինացի գրոսմայստեր Ալեքսանդր Արեշչենկոյին, իսկ հաջորդ պարտիան շահեց հնդիկ Սեթ Վինայակից: 3 տուրից հետո միանգամից 34 շախմատիստ հարյուր տոկոսանոց արդյունք ունի:

Ղազարյանն ու Մկրտչյանը կփորձարկվեն «Կուբանում»

Ինչպես տեղեկացանք «Ֆյունիկ» ակումբից, թիմի առաջատար երկու ֆուտբոլիստներ՝ առաջնության լավագույն ռմբարկու Գեւորգ Ղազարյանը եւ Հայաստանի լավագույն ֆուտբոլիստ Կառլեն Մկրտչյանը փորձաշրջանի են մեկնել Կրասնոդարի «Կուբան»: Վերջինիս կազմում փյունիկցի երկու ֆուտբոլիստները կմասնակցեն Թուրքիայի Բելեք քաղաքում կայանալիք ուսումնամարզական հավաքին, որի ընթացքում ռուսական ակումբը ստուգողական 4 հանդիպում կանցկացնի:

Ինչ վերաբերում է «Ֆյունիկին», ապա Հայաստանի չեմպիոնը հրաժարվելով Սանկտ Պետերբուրգում կայանալիք ֆուտբոլի «Համագործակցության գավաթի» խաղարկությունից, այս օրերին մարզվում է Ավանի ֆուտբոլի ակադեմիայի խաղադաշտում: Ուսումնամարզական առաջին հավաքը «Ֆյունիկը» կանցկացնի Սոչիում, ապա կմեկնի Կիպրոս:

Առաջինը ասպարեզ դուրս կգան կանայք

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի կենտրոնական տանն այսօր պետք է մեկնարկեին շախմատի Հայաստանի տղամարդկանց եւ կանանց բարձրագույն խմբի առաջնությունները: Սակայն առայժմ պայքարի մեջ կմտնեն միայն կանայք, իսկ տղամարդկանց 71-րդ առաջնության մեկնարկը կտրվի մեկ շաբաթ անց՝ հունվարի 18-ին: Պատճառը մասնակիցներից մեկի՝ գրոսմայստեր Զավեն Անդրեասյանի հիվանդությունն է: Երեկ կայացած բացման արարողության ժամանակ առաջնության մասնակիցների համաձայնությամբ որոշվեց մրցաշարի մեկնարկը հետաձգել մեկ շաբաթով, որպեսզի Զավեն Անդրեասյանը հնարավորություն ունենա մասնակցելու մրցավեճին:

Ինչ վերաբերում է կանանց 66-րդ առաջնությանը, ապա մասնակիցների թվում չեն մեր առաջատար շախմատիստուհիներ Լիլիթ Մկրտչյանը, Էլինա Դանիելյանը, Լիլիթ Գալոյանն ու Նելլի Աղինյանը: Այնպես որ հանրապետության գործող չեմպիոնուհի Անահիտ Խաչատյանին ավելի հեշտ կլինի պայքարել տիտղոսը պահպանելու համար: Նրա մրցակցուհիների թվում են Սիրանուշ Անդրեասյանը, Նաիրա Մովսիսյանը, Լիանա Մարտիրոսյանը, Մարիա Գեւորգյանը, Արմինե Բաբայանը, Նարինե Գասպարյանը, Վարդուհի Քալաշյանը, Շուշան Սարգսյանն ու Աստղիկ Մեսելջյանը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Հեսամանոյա տրամադրություններ

Ջյան տեսով Նոր տարվա անձրեւից թրջված անմայթ փողոցի մշտական լռությունը երբեմն խախտում են մեքենաների՝ տների մեջ թույլ լսվող աղմուկը ու մեկ էլ՝ մոտակա ինչ-որ եկեղեցու զանգերը՝ օրվա տարբեր ժամերին հնչող (հավանաբար, ավետարանչական): Փողոցը անմասն մնաց ամանորյա լուսային տոնականությունից ու շարունակում է երեկոներն անցկացնել լաստերների թույլ ժոիտի մեջ, որան էլ խաղաթի շեղ առանձնատներից շատերը իրեն են ընտրել բնակատեղի (փոխարենը խոշոր աղբամանները միջշենքային չերեւացող տեղում անգամ, որ գրեթե մշտապես զարմացնում էին պարունակության առատությամբ, նախատոնական ու հետտոնական այս օրերին միշտ դատարկ են՝ մաքուր):

Հայկական Նոր տարին այս անգամ էլ կուլ տվեց ամենքիս. նորից նույն իրարանցումը, փողերը օդի մեջ հալվում-թռչում էին: Իզուր: Մեր անմիտ սովորությունները շարունակում են հետապնդել մեզ, հալածել, ինչպես գինարբուքից հետո սուր գլխացավն ու ուրախառնոցը: Գիտակցելով անգամ այս ամենը՝ գրեթե անկարող ես լինում շրջանցել դրանք. ծուղակը լավ են սարքել՝ վարպետորեն. ավանդույթը ամուր է բռնել մեր կոկորդից: Հետեւանքը հուսահատեցնող է: Մեր ընտանիքներից, ավագներից սովորույթները փոխանցվում են մեր զավակներին, փաթաթվում վզներին՝ ակամա:

Առեւտրավաճառի ու սպառողականության այս մարաթոնը կրքերի, բախումների, նյարդային լարվածության մի շղթա է, որի ավարտին մշտապես հոգնածությունն ու դեպրեսիոն վիճակներն են ուղեկցում, եւ այս ամենը պատճառ են տնականությունը նյութապաշտության վերածելու մեր թյուր սովորության: Ավելի հուսահատեցնողը՝ հոգեւոր տունի, Սուրբ Ծննդի խորհրդին անգիտակից լինելը շատերին հաճախ անհեթեթության մեջ է գցում: Սեղանին դրվելիքը լավ գիտենք, բայց մի մասը այդ օրը շփոթում ու Սբ Զատիկ է շնորհավորում:

Տարեմուտի օրերին միշտ մի ծոցված վախ վաս նախազգացում է պատրաստում՝ հանրածանոթ մի անձի (կամ ոմանց) կյանքից հեռացման եւ դա օրինաչափություն է դարձել ու... սպասում ես նույնիսկ: Գույժը չուշացավ՝ առաջինը Լոս Անջելեսից էր՝ գրող Ստեփան Ալաջաջյանի մահը, հետո սիրված դերասան Կիմ Երիցյանը, Տաթեւիկ Ղափլանյանը: Նոր տարվա առաջին օրերից գույժը շարունակվում է՝ սիրելի մասնագետ՝ Օհան Դուրյանը, պատմաբան, թարգմանիչ Սիմոն Կրիյաշարյանը, թարգմանչուհի Անահիտ Բայանդուրը, նկարիչ Դավիթ Կարեյանը, որի երիտասարդ կյանքը ընդհատվեց ավտովթարից: Ու էլի շատերը, պարզ մարդիկ:

Տխուր է: Մահվան մանգաղը իր գործը հենց առաջին օրերից տեսավ:

... Մի տխուր վարորդ Երեւանի սուպերմարկետներից մեկի մոտ նախատոնական օրերի եռուզեռից զարմացած, նայում էր խանութից դուրս եկող հայերի դեմքերին. «Ոնց որ աշխարհի վերջը լինի: Էս ի՞նչ են անում». տեսնե՞ս ինքը չի մասնակցելու էս մարաթոնին:

Գները օր-օրի բարձրանում ու հոպարս նայում էին իրենց տերերին: Գնային տենդը հոգեբանական շոկ էր առաջացնում՝ առեւտուրը ազարտի վերածում: Մի երիտասարդ առաջարկ արեց. «Եկեք միակամ լինենք, այս անգամ չառնենք դրանց ապրանքները. խնձորը թող փչանա, գինին թթվի, բանանը փտի»: Իսկ Բելգիայից նոր վերադարձած կինը պատմում էր տեղի բնակիչների հանգիստ վիճակների ու Ծննդյան տոների կապակցությամբ արված զեղչերի (նաեւ մթերային ապրանքների) մասին:

Շարունակե՞նք ապրել այսպես, հայեր՝ իրար թալանենք ու չխնայենք, չարախոսենք ու զազրախոսենք, եղծվենք ու կեղծենք, եկեղեցուց ճրագալույցին կրակ տուն բերենք ու չիմանանք ինչն-ինչոց է: Ապրենք այսպես՝ հեթանոս ամբոխի պես:

Հեսամանոյա շուկան դատարկ է, մի քանի տեղ սառած-սեւացած բանջարեղենը անհրապույր է, մեկն էլ շարունակում է առիթից օգտվել նորից, բայց ժամանակը լրացել է, վաճառականը պատվանդանից ցած է իջել, գները խելամիտ սահմաններում տեղավորել. ժամանակավոր հաղթանակից հոգնած 1200-1300 դրամանոց բանանը 600-700-ով է իրեն վաճառում, իսկ ձուն, սովորական այդ հավկիթը համեստորեն 50-55 դրամ է նորից: Ջու չածելու ինչ-որ մեկի հրամանը տեղական հավերը պարզվում է լուրջ են ընդունել ու արհեստական վիճակ ստեղծել. տեղական թռչնաբուծական ֆիրմաները փակել էին դռները տեղացի գնորդի առաջ: Ստեղծված դեֆիցիտը գնի արհեստական աճ էր առաջացրել՝ 100-120 դրամ: «Ինչ-որ մեկին շատ փող էր պետք, ասում էր ձվավաճառը, 1-2 օրում՝ մի քանի միլիոն. վաս է՞»:

Հիմա տեսնում եմ՝ առեւտրի այս մեծ տոնը ում համար է, էլ ո՞ւր ենք մեզ կոտորում: Որքան համեստ ընտանիքներ այս օրերին ֆինանսական ճգնաժամ են ապրում: Հոգեբանական վակուում ու տխրություն կա հանրային վայրերում: Ժամանակը չէ՞ արդյոք փոխելու մեր մտածելակերպը եւ հրաժարվելու մեր մի շարք սովորույթներից, որոնք ոչ միայն անիմաստ, նաեւ վնասակար են: Զորօրինակ՝ դրամի անտեղի կորուստը, նյարդային լարումները, ավելորդ հոգնածությունը, անառողջ ապրելակերպը, աննորմալ սննդակարգը, ալկոհոլի չարաշահումը՝ ավա՜ղ երբեմն էլ ողբերգական հետեւանքներով: Որքան ավտովթարներ եղան այս օրերին:

... Պսպղացող լույսերի մեջ թաղված քաղաքի ամենատոնականորեն լուսավորված փողոցների խորքում, այնուամենայնիվ, տխրությունն է թափառում, սառը անորոշ մի բան հուշում է, որ մարդը կորցրել է իրեն, կորցրել իր դեմքը:

Ձնախառն անձրեւից նեղացած քաղաքի շները շարունակում են նախկին կյանքը՝ խեթ հայացքով նայելով աղբատարների վերեւում թառած կատուներին: Իսկ մուրացկաններն ու բոմժերն այս օրերին գոհ են, կարծես:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Ինչ է խոստանում Ճագարը

Ճագարի տարին սկսվում է Նոր տարվա առաջին նորալուսնի օրը, որը փետրվարի 3-ին է: Տարին կանխատեսվում է, որ համեմատաբար հանգիստ կլինի, սակայն ակնառու փոփոխություններ կլինեն բոլոր ոլորտներում: Որքան սեր ու համերաշխություն ստեղծենք մեր շուրջը եւ խուսափենք բացասական մտքերից, տարվա ընթացքում այնքան կփոխհատուցվի մեզ: Ահա սա է նոր տարվա խորհուրդը: 2011-ի բնորոշ տարրը մետաղն է եւ նրա արտահայտիչ գույնը կապույտն է, ուստի խորհուրդ է տրվում տան զարդարանքներում նախընտրությունը տալ կապույտ գույնին: Ցանկալի է ողջ տարվա ընթացքում հնչի ներդաշնակ բազմաձայն երաժշտություն կամ բնության ձայների վրա հիմնված երաժշտություն: Տարվա գույներն են՝ դեղին, ոսկեգույն, մոխրագույն, շագանակագույն եւ իհարկե անոպայման կապույտի որեւէ երանգ:

Իսկ այժմ, թե ի՞նչ են հուշում 12 կենդանակերտերի տակ ծնվածներին.

Առնետ - Տարվա ընթացքում խուսափեք աչքի ընկնելուց: Բարդություններից խուսափելու համար պետք է համակերտվել փոփոխություններին:

Ցուլ - Գործերը լավ կընթանան եւ տարին կանցնի աշխատանքային հաջողություններով: Ձեռք կբերեք ներքին բավարարվածություն, հավասարակշռություն եւ ներդաշնակություն: Երջանկությունը միշտ ձեզ կուղեկցի:

Վագր - Տարվա ընթացքում եղեք խիստ գործնական, դա կօգնի խուսափել հուզմունքներից ու տհաճություններից: Ձեր կյանքում սպասվում են փոփոխություններ: Խոհեմ եղեք եւ հրաժարվեք որոշ գործընկերներից ու բարեկամներից, որոնց վստահում եք:

Կատու (Ճագար) - Որեւէ խնդիր չի ծագի, եւ տարին բարենպաստ է բոլոր նոր գործեր ձեռնարկելու համար: Շրջապատը մեծ դեր կունենա ձեր կյանքում: Ընկերները կդառնան ձեր նախագծերի հենարանը: Անձնական կյանքում հնարավոր են փոփոխություններ:

Վիշապ - Ձեր հաջողություններին ոչ ոք չի խանգարի, ուստի ամեն ինչ կախված է ձեզանից: Վճռորոշ տարի է: Դուք կհարմարվեք բոլոր հանգամանքներին, եթե ձեզ հունից չհանեն ավանդական պարտավորությունները:

Օձ - Շրջապատված կլինեք սիրով եւ երջանկության առիթներ շատ կլինեն: Առավել կայուն կլինի տարվա 2-րդ կեսը՝ կվայելեք յուրաքանչյուր նախաձեռնության փառքը:

Ձի - Տարին հրաշալի կլինի՝ սեր, ուսում, աշխատանք եւ այն ամենը, ինչն անհրաժեշտ է երջանիկ լինելու համար: Ձիերը ցանկության կունենան ակտիվորեն դրսեւորելու իրենց գործնական որակները: Փորձեք եւ կհաջողեք:

Այծ - Հիանալի տարի է, քանզի նախորդ տարիներին կատարած ներդրումները լրացուցիչ շահույթ կբերեն: Հավասարակշռված վարքը լավագույն զենքն ու հաջողությունը կլինի ողջ տարվա ընթացքում:

Կապիկ - Տարին բարենպաստ է ֆինանսական առումով: Պետք է կենտրոնանալ գլխավոր նպատակների վրա: Դրսեւորեք համառություն ու աշխատասիրություն եւ կհասնեք ցնցող արդյունքների:

Աքլոր - Ցուցաբերեք հարաբերական հանգիստ վիճակ եւ նախաձեռնություններում զգույշ եղեք: Համառության արդյունքում կհասնեք ցնցող արդյունքների:

Շուն - Ուշադրություն դարձրեք ձեր սիրուն: Ջնայած այս տարի ձեր առանձնահատուկ պատշտպանվածությանը, խուսափեք ռիսկից եւ արկածներից, որպեսզի հետո զղջալու կարիք չլինի:

Վարազ - Կարեւորեք բիզնեսը, որը ձեզ հաջողություններ կբերի: Տարին խոստանում է առաջախաղացում մասնագիտական ոլորտում: Անձնական կյանքում կլինեն փոփոխություններ: Հնարավոր է բնակավայրի փոփոխություն: Սպասվում են հետաքրքրական գործնական առաջարկներ, հեռանկարային ծանոթություններ:

Խոստմնահաղը՝
ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆԻ

ԱԴՐԲԵՋԱՆ

Նոր հավակնություններ

1-ին էջից

Իսկ երբ ադրբեջանցի քաղաքագետը նրան խորհուրդ է տալիս անցկացնել «հանրային կարծիքի հարցում», ապա ակնհայտորեն ակնարկում է, որ Իլհամ Ալիեւը «վայելում է իրանական ադրբեջանցիների վստահությունը»: Այսինքն, ասում է, որ «ազատ կամարտահայտության դեպքում իրանական Ադրբեջանը միավորման կողմ է»:

Արտառոցն այն է, որ նույն քաղաքագետը կամ նրա գործընկերը միեւնույն ժամանակ հարեւաններին հանդեպ «տարածքային հավակնություններ» է վերագրում Հայաստանին: Այն էլ՝ նույն հարցազրույցում, որտեղ ասում է, թե «Վրաստանում ապրող ադրբեջանցիներն առաջնորդ են համարում Իլհամ Ալիեւին»:

Կարելի է, իհարկե, այս ամենը վերագրել ինչ-որ «գերբնական ուժերի» ազդեցության: Բայց դա այդպես չէ: Ադրբեջանը գնալով դառնում է չափազանց հավակնոտ: Նույն ուղերձում Իլհամ Ալիեւը «կրկին չի մոռացել, որ Զանգեզուրի մահալը եւ Իրավանի խանությունը բուն ադրբեջանական հող են»:

Եվ, վերջապես. նոր տարին Ադրբեջանում նշանավորվել է Հեյդար Ալիեւի «աշխատությունների» 31-րդ, Իլհամ Ալիեւի ճառերի եւ ելույթների 5-րդ հատորի տպագրությամբ: Ճիշտ այնպես՝ ինչպես ԽՍՀՄ-ում Լենինի աշխատություններն էին տպագրվում «գենսեկի» ճառերի եւ ելույթների հետ: Եվ Հեյդար Ալիեւն է, որ Լեոնիդ Բրեժնեւին համարում էր «մեր օրերի Լենինը»:

Մի երկրում, որտեղ պետական մակարդակով մշակվում եւ գործի է դրվում «համազգային առաջնորդի» պաշտամունքը, բնականաբար, չեն կարող այլ կերպ մտածել, քան՝ որ «Սորոսի եւ ամերիկյան կառավարության փողերով գործող զանազան իրավապաշտպան կազմակերպությունները նսեմացնում են Ադրբեջանի ձեռքբերումները»:

Դա այն երկիրն է, որտեղ նախագահն սանում է «Լրագրողների լավագույն բարեկամ» մրցանակն այն դեպքում, երբ կեղծ մեղադրանքով լրագրող է դատապարտվում երկարամյա բանտարկության: Այս դեպքում, ինչ խոսք, ամեն մի քննադատություն ընկալվում է որպես «ոնցգություն»: Բայց ու՞մ եւ ինչի՞ դեմ:

Այս է թերեւս գլխավորը. ԱՄՆ-ը կամ այլ երկիր Ադրբեջանի եւ ադրբեջանական ժողովրդի՞, թե՞ իշխող կլանի քննադատն է: Իհարկե կլանի: Բայց խնդիրն այն է, որ Ադրբեջանում գործում է «պետությունը ես եմ» սկզբունքը: Պետությունն Իլհամ Ալիեւն է, որ իր անհավասարակշիռ քայլերով անհարմարություններ է ստեղծում գրեթե բոլոր հարեւանների համար: Ամենաթարմ տպավորությունը, որ հնչեցրել է նա, վերաբերում է ղարաբաղյան կարգավորմանը. «Ադրբեջանն ակնկալում է այս տարի սկսել աշխատանքները խաղաղության պայմանագրի շուրջը»: Եվ սա ներկայացվում է, ոչ ավել, ոչ պակաս, քան՝ իբրեւ «ԵԱՀԿ Մխ-ին ներկայացվող վերջնագիր»:

Վերջնագիր՝ դիվանագիտությա՞ն ասպարեզում: Անհամատեղելիները, սակայն, Ադրբեջանում «օրինաչափորեն համատեղվում են», քանի որ Իլհամ Ալիեւը երկրի արտաքին քաղաքականությանը տվել է «հարձակողականության» հրահանգ: Երեւի մտադիր է կեսդարյա հոբելյանը, որ կլրանա գալիք դեկտեմբերին, նշանավորել «աշխարհաստեղծ նվաճումներով»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունների ժողով գումարելու մասին

Համաձայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ 34-րդ հոդվածի 2-րդ մասի «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ (այսուհետ՝ Բյուրո) խորհրդի մեկ անդամ ընտրում են սպառողների իրավունքները պաշտպանող, առնվազն երեք տարվա պետական գրանցում ունեցող կազմակերպությունները՝ իրենց միջեւ ձեռք բերված պայմանավորվածությամբ՝ երկու տարի ժամկետով:

Ի կատարումն Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խորհրդի վերոհիշյալ անդամի պարտականությունները վաղաժամկետ դադարեցվել են՝ ՀՀ կենտրոնական բանկը հայտարարում է, որ 2011 թվականի փետրվարի 25-ին՝ ժամը 10:00-ին ՀՀ կենտրոնական բանկի շենքում՝ ք. Երեւան, Վ. Սարգսյան 6 հասցեում, տեղի է ունենալու ժողով սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունների կողմից Բյուրոյի խորհրդի անդամի ընտրության համար:

Բոլոր այն կազմակերպությունները, որոնք բավարարում են Օրենքով սահմանված պահանջներին եւ ցանկանում են մասնակցել վերը նշված համապատասխան ժողովին պետք է մինչեւ 2011 թվականի փետրվարի 10-ը այդ մասին գրավոր հայտ ներկայացնեն ՀՀ կենտրոնական բանկ՝ հայտին կցելով իրենց պետական գրանցման վկայականի եւ կանոնադրության պատճենները:

Այն կազմակերպությունները, որոնք մտադիր են հիշյալ ժողովին ներկայացնել Բյուրոյի խորհրդի անդամի թեկնածու, հայտին պետք է կցեն նաեւ այդ թեկնածուի անունը եւ ազգանունը, տեղեկություններ նրա կրթության եւ աշխատանքային փորձի վերաբերյալ, փոխկապակցվածությունը Բյուրոյի անդամների հետ (բացակայության դեպքում՝ նշում փոխկապակցվածության բացակայության մասին), նրան առաջադրող կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը (անվանումները) եւ վերջինի (վերջիններ) հավաստումն առ այն, որ ներկայացված թեկնածուներն իրենց մասնագիտական կարողություններով ի վիճակի են ապահովել օրենքով եւ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված խորհրդի լիազորությունների պատշաճ իրականացումը, եւ առկա չեն Բյուրոյի կանոնադրության 123-րդ կետով սահմանված սահմանափակումները:

Ժողովին մասնակցելու համար համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչները ժողովի անցկացման վայր պետք է ներկայանան իրենց անձը եւ տվյալ կազմակերպությունը ներկայացնելու լիազորությունները հավաստող փաստաթղթերով:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

Ցավակցություն

Հայաստանի մարզական լրագրողների ֆեդերացիան ցավակցում է ՀԱՕԿ-ի լրատվության պատասխանատու, մարմնամարզությունից ԽՍՀՄ սպորտի վարպետ, մարզական անվանի հեռուստամեկնաբան Նաթելա Հովասափյանին նրա սիրելի մոր՝ **տիկին Ալինայի** անժամանակ մահվան կապակցությամբ:

Հայաստանի մարզական լրագրողների ֆեդերացիա

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝10.1.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: